



Կապանի գլխավոր և մայր ձեռնարկությունը՝ «Դինո գոլդ մայնինգ ֆանդինգ» ՓԲ ընկերությունը. իրողություններ, հիմնախնդիրներ, ծրագրեր



ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003
ՀՊԿՏԵՐԵՐԻ 1-ԻՑ

Հիմնադիր և գլխավոր «ՍՅՈՒՆԻԱՍ ԱՇԽԱՏ» ՊՍՏԱՆԱԹԿԱ ՊԱՏԱՆԱԿԱՆՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ ք. ԿՈՊԱՆ, ԸՆԴՈՒՄՅԱՆ 20/32
Հեռ. համար՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

ՍՅՈՒՆԻԱՍ ԹԵՐԻՔ

Այունյաց երկիր

Գինը՝ 100 դրամ
ԵՐԵՎԱՆԻ
27 ՆՈՒԵՄԻ 2010թ. • № 13 (210)

www.syuniacyerkir.am

Համարում

ԱՐԱ ՍԱՐԿՈՅԱՆ.
«Կոմբինատն իր արտադրության ծավալները կրկնապատկելու կուրս է վերցրել»



04

Ընկերությունը վերագինվում է...
հարցազրույց ձեռնարկության գլխավոր ինժեներ Սերգեյ Կոստրոսովի հետ



05

Կարեր.
Նոր սեփականատեր ու՞մ աշխատատեղերի թիվը չի կրճատվել



06

Բնադատաբանություն.
մշակված մոնիթորինգ, ռեսուրսների և թափոնների խելամիտ օգտագործում



12

ՀԱՅԱՅԶ ԱՆՑԱՑ ԸՆԿԱՊԱՐԿՆ ՈՒ ԱՊՈՍՏՈՆ



ՌՈՒԲԵՐՏ ՖԱԼԵՏՏԱ. «Կապան ձեռավորած մեր ձեռնարկությունն այսօր էլ քաղաքի բնականոն զարգացման գրավականն է, ինչը գիտակցում ենք ու հաշվի առնում»

«ԴԳՍԶ» ՓԲԸ նոր սեփականատիրոջ որդեգրած քաղաքականության, չորս տարում կատարված աշխատանքների արդյունքների, ձեռքբերումների, առկա հիմնախնդիրների, ապագա ծրագրերի, իշխանությունների հետ ունեցած հարաբերությունների, համայնքի կյանքում կոմբինատի ունեցած դերի մասին է պատմում ընկերության գլխավոր տնօրեն Ռոբերտ Ֆալետտան:



Չորս տարի առաջ՝ 2006թ. օգոստոսի 10-ին, Կապանի լեռնահանքային ձեռնարկության սեփականատեր դարձավ Կանադայում տեղակայված «Դանդի փրիշու մեթալ» միջազգային հանքարդյունաբերական ընկերությունը:

ԽՄԲԱԳՐՍԿԱՆ

Տնտեսություն՝ անցման շրջանին բնորոշ բարդություներից ձերբազատվող

Ինչպե՞ս են գործերը Կապանի հանքարդյունաբերական ձեռնարկությունում՝ «Դինո գոլդ մայնինգ քամինի» ՓԲ ընկերությունում: Ահա հարցը, որին փորձում է պատասխանել թերթի սույն համարը:

Կապանի կոմբինատը (տեղացիներն առայսօր այդպես են կոչում ՓԲ ընկերությունը) ոչ միայն ամենահին արդյունաբերական ձեռնարկությունն է մարզկենտրոնում, այլև Կապանի մայր ձեռնարկությունը: Կոմբինատն այսօր էլ կապանցիներին ամենաշատ աշխատատեղ առաջարկող գործատու է: Այսօր էլ կոմբինատը սոցիալական կայունության հիմնական երաշխավորն է մարզկենտրոնում: Հիմա էլ կապանցիների ամենաիրական գործընկերն է քաղաքի առջև ծառայած հիմնախնդիրների լուծման գործում: Հիմա էլ կոմբինատը Կապանի ապագային առնչվող ծրագրերի ռեալ ու անքակտելի բաղադրիչն է ու երաշխավորը, նաև ամենախոշոր հարկատուն Կապանում:

Ահա թե ինչու է մեզ հետաքրքրում կոմբինատի գործերի վիճակը:

2006թ. օգոստոսից հետո, երբ ընկերությունն անցավ «Դանդի փրիշու մեթալ» հանքարդյունաբերական ընկերության տնօրինության ներքո, այնտեղ նույնպես ամեն ինչ հարթ չէր, եւ արձանագրվեցին ոչ ստանդարտ ու ոչ ավանդական երեւոյթներ: Սոս 500 մարդ չորս տարվա ընթացքում աշխատանք կորցրեց, թեւ այդ սեփականատիրոջ օրերում նույնքան աշխատատեղ էր ավելացել: Չնայած կոմբինատի ղեկավարությունը քանիցս բացատրություն տվեց այդ առիթով, բայց դա եղավ ծանր հարված սոցիալական ոչ բարվոք վիճակում գտնվող մարդկանց համար: Հանքագործները ոչ քիչ դժվարություններ կրեցին ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով նույնպես: Այսօր էլ մասնագետների ոչ միանշանակ գնահատականին է արժանանում հանքավայրերի շահագործման ուղղությամբ տարվող քաղաքականությունը:

«Այունյաց երկիր» ստեղծագործական խմբի մի քանի օրվա աշխատանքի ու վերլուծությունների արդյունքում հանգեցինք հետևության, որ բազմաթիվ կնճիռներ ու խոչընդոտներ այնտեղ հարթված են, որ կոմբինատն իրական վերափոխումների ու արդիականացման, զարգացման ծրագրերի մշակման ու կենսագործման ճանապարհին է: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող նյութերը, կարելի է ասել, հանգամանակից տեղեկություններ են տալիս այդ ամենի մասին:

Տեղական, տարածաշրջանային ու ճյուղային առանձնահատկությունների համապատկերի վրա կոմբինատի գործունեության մեր դիտարկումներն այլ եզրահանգումների եւս բերեցին:

Շարունակությունը՝ էջ 16

Կարծիքներ

«Դինո գոլդ մայնինգ քամին» ՓԲ ընկերության մասին



ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

Պուրս եկան ֆինանսատնտեսական ճգնաժամի հորձանուտից: Եվ հիմա կարելի է ստույգ ասել՝ ճգնաժամի հարուցած դժվարությունները հետևում են մնացել, ձեռնարկությունը դուրս է եկել կայունության եւ զարգացման ճանապարհ:

Հաճելիորեն պիտի արձանագրել, որ վերջին տարիներին, ինչպես եւ այսօր, ընկերությունը մասնակցում է Կապանում իրականացվող գրեթե բոլոր սոցիալական ծրագրերին: Այսօր ձեռնարկության աշխատանքներում ընդգրկված է հազարից ավելի մարդ, ինչը քաղաքի սոցիալական կայունության գլխավոր երաշխիքներից մեկն է: Ընկերության ղեկավարությունն ունի հեռանկարային լուրջ ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր: Ոչ պակաս ուշագրավ է համագանձը, որ ընկերությունը գործընկերային լավ, փոխշահավետ հարաբերությունների մեջ է ոչ միայն Կապան քաղաքի, այլև մերձակա գյուղական համայնքների հետ: Դրվատելի է, որ ձեռնարկությունն անհրաժեշտ նյութերի, սարքավորումների մի մասը ձեռք է բերում մարզից, ինչը, բնականաբար, հավելյալ աշխատատեղեր է ապահովում:

Այսօր կրկին պիտի ասեմ՝ Սյունիքի մարզպետարանը, ինչպես մինչեւ հիմա, նաեւ այսուհետ, իրենցից կախված ամեն ինչ կանի, որ Կապանի մայր ձեռնարկությունը խոչընդոտներ չունենա զարգացման ճանապարհին: Միաժամանակ ակնկալում ենք, որ ընկերությունն էլ իր հերթին կանի հնարավոր մարզկենտրոնի ու շրջանի առջև ծառայած խնդիրների լուծմանը նպաստելու համար:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՅԱՆ ՀՀ Ընդգեղկայի եւ բնական պաշարների նախարար

«Դինո գոլդ մայնինգ քամին» ՓԲ-ն հանրապետության հանքարդյունաբերության խոշոր ձեռնարկություններից է, որը կարելու է նշանակություն ունի Հայաստանի տնտեսության, մասնավորապես Կապանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Ընկերությունը կարողացավ հնարավորին քիչ ցնցումներով դուրս գալ



համաշխարհային տնտեսության, հատկապես հանքարդյունաբերության ոլորտում սկսված ճգնաժամից, ավելին՝ «Դինո գոլդ մայնինգ քամին» ՓԲ-ն կայունության, զարգացման ճանապարհին է: Ընկերության զարգացման ծրագրերն իրատեսական են, ինչը շատ կարեւոր է Սյունիքի մարզի համար: Համոզված եմ, որ այդ ծրագրերն իսկապես կյանքի կոչվեն շնորհիվ ընկերության ղեկավարության իրականացրած այն քաղաքականության, որի արդյունքում այսօր էլ այն համարվում է Հայաստանի լավագույն ձեռնարկություններից մեկը:

«Դինո գոլդ մայնինգ քամին» ընկերության առանձնահատկություններից մեկը, իմ կարծիքով, աշխատակիցների հանդեպ մշտական ուշադրությունն է: Ընկերության տնօրինության համար առաջնային են այն մարդկանց անվտանգության ու առողջության խնդիրները, ովքեր իրականացնում են հանքարդյունաբերողի դժվար ու պատասխանատու աշխատանքը: Ընկերությունը մշտապես քայլեր է ձեռնարկում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, դրանց անվտանգ օգտագործման, ինչպես նաեւ բնապահպանության ուղղությամբ:

«Դինո գոլդ մայնինգ քամին» ընկերությունը պարտաճանաչ է նաեւ պետության հանդեպ իր պարտավորությունների կատարման հարցում:

Համոզված եմ, որ ընկերությունը միշտ լինելու է առաջինների շարքում, իսկ պետական կառավարման մարմինները միշտ աջակցելու են նրան հետագա զարգացման եւ առաջընթացի գործում:

ԱՐՏՈՒՐ ԱՌԱՅԱՆ Կապանի քաղաքապետ

Մեկուկես հարյուրամյակից ավելի է, ինչ Կապան բնակավայրի եւ կոմբինատի տարեգրությունները սերտորեն միահյուսված են, իսկ անցյալ դարի կեսերից հետո քաղաքի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունը գործում է մասնակցություն է ունեցել Կապանի կառուցապատմանը, նրա ենթակառուցվածքների զարգացմանը: Առանց վերապահության կարելի է ասել, որ Կապանը կառուցվել է կոմբինատի հենքի վրա եւ նրա շուրջը:

Կապան համայնքի ղեկավարի իմ գործունեությունը համընկավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ եւ հարկադիր պարսպաբեկի մատնված ձեռնարկության պայմաններում ավելի ծանրացավ քաղաքապետի խաչը: Այդ ժամանակ էր, որ ինձ համար ավելի տեսանելի եւ առարկայական դարձավ այն, որ կոմբինատի բնականոն գործունեությամբ է պայմանավորված մեր քաղաքի բարեկեցությունը, նրա վաղվա օրը: Չէի ասի, թե համայնք-սեփականատեր համագործակցությունը միանգամից բնականոն հուն մտավ: Սկզբում բավականին դժվար էր. առաջին հանդիպումների ժամանակ կոմբինատի սեփականատերը թերահավատորեն վերաբերվեց քաղաքապետարանի ներկայացրած ծրագրերին, բայց երբ մեկ-երկու ծրագիր կյանքի կոչվեց, մեր փոխհարաբերությունները տեղափոխվեցին լուրջ համագործակցության դաշտ: Դեռ ավելին, կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոբերտ Ֆալետտան ընդգրկվել է քաղաքապետարանի հանրային խորհրդի կազմում: Իսկ ընդհանրապես ձեռնարկության տնօրենի հետ պարտադիր ամիսը երեք-չորս ամսան հանդիպում ենք, քննարկում քաղաքի կենսագործունեությանն առնչվող հիմնահարցեր: Արդեն նկատելի է նրա որդեգրած գործելակերպը. Ռոբերտ Ֆալետտան, որտեղ որ աշխատում է, ձգտում է մնայուն հետք թողնել այդ համայնքի կյանքում: Սակայն, նրա գործում ջանքերի շնորհիվ մեր քաղաքն ունեցավ ջրցան մեքենա, հովանավորում են մարզական եւ մշակութային միջոցառումներ, իսկ այս օրերին կոմբինատի օժանդակությամբ Կապանի

մշակույթի կենտրոնում գործում է ամառային հանգստի ճամբար: Բարեգործությունների այս շարքում կուզեի առանձնացնել մեկը. Ռոբերտ Ֆալետտան առաջիններից մեկն արձագանքեց Կապանի բժշկական կենտրոնը նորոգելու կոչին, որի արդյունքում հիմնանորոգվեցին վնասվածքաբանական բաժանմունքի նախավիրակապարանը, վիրակապարանն ու ընդունարանը, հատկացվեցին



բուժասրքավորումներ: Կապան քաղաքի Վաչագան թաղամասի գաղֆիկացման համաֆինանսավորման մի մասը եւս հանձն առավ կոմբինատի սեփականատերը: Մարզկենտրոնի նախակրթարանները նույնպես կոմբինատի տնօրինության հոգածության առարկան են:

Քաղաքապետարանը նախաձեռնել է Կապանի տարբեր հատվածներում կառուցել վեց խաղահրապարակ՝ ջրավազանով, խաղային պարագաներով: Առաջարկել ենք կոմբինատի ղեկավարությանը, որ դրանցից մեկի կառուցմանն իր նպաստը բերի կոմբինատը, եւ չենք կասկածում, որ մեր նախաձեռնությունն անպատասխան ու անհետեւանք չեն մնա:

Ուզում եմ նաեւ նշել, որ Կապանի կոմբինատը համայնքի բյուջե էր մտնում ամսական երկու միլիոն դրամ, այդ գումարն այժմ կազմում է հինգ միլիոն, որն, անշուշտ, ուղղվում է համայնքի առջև ծառայած խնդիրների լուծմանը:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է արձանագրել, որ համագործակցության ներկա մակարդակի պահպանման դեպքում 2010-ին եւ հետագա տարիներին իրենց լուծումը կստանան համայնքի առջև ծառայած այլ խնդիրներ եւս:

ՊԱՏՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Համակարգային փոփոխությունների ճանապարհով

Նոր մեքենասարքավորումների ձեռքբերում, արդիական տեխնոլոգիաների կիրառում. ահա ընկերությունում կատարվող ներդրումների գլխավոր ուղղություններից մեկը, որի շնորհիվ այնտեղ կյանքի է կոչվում վերակառուցման ու վերազինման ռազմավարությունը:



Նոր տեղադրված №3 էներգայանը /6.04 կվ/



Ֆլուրացիոն նոր հոսքագիծ հարստացուցիչ ֆաբրիկայում



Հանքաքար տեղափոխող նոր մեքենան դուրս է գալիս N9 հանքուղուց

Ընկերությունը ձեռք է բերել գերմանական տեխնիկա հանքում հորատման աշխատանքներ կատարելու համար



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

ՀԱՅԱՑՔ ԱՆՑԱԾ ԳԱՆԱՊԱՐՅՈՒՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻՆ

ՌՈՒԲԵՐՏ ՖԱԼԵՏՏԱ. «Կապան ձեւավորած մեր ձեռնարկությունն այսօր էլ քաղաքի բնականոն զարգացման գրավականն է, ինչը գիտակցում ենք ու հաշվի առնում»

Ռոբերտ Ֆալետտան Շահումյանի հանքի հյուսիսային տեղամասում



Ռարոն Ֆալետտա, ինչն էլ համարում «Դիմո գոլդ մայնինգ քամինում» անձնագրավոր, նկատելի, շոշափելի հաջողությունը նոր սեփականատիրոջ անցած չորս տարվա գործունեության ընթացքում:

– Կարծում եմ՝ լրջագույն արդյունքը, որին մենք հասել ենք այս չորս տարվա ընթացքում, բացասական դրամական հոսքերից դեպի դրական դրամական հոսքեր անցում կատարելն է, այսինքն՝ սկսել ենք շահույթ ստանալ: Իհարկե, միանշանակ, կարելի էր ձեռքբերում է նաև աշխատանքային պայմանների բարելավումը, առողջ միջավայրը, բարոյահոգեբանական նորմալ մթնոլորտը:

Նշեն նաև, որ վերջին երկու տարիներին ՀՀ կառավարության հետ բավականին կառուցողական հարաբերություններ ստեղծվեցին ու բարելավվեցին: Միաժամանակ համայնքն ինքն էլ ավելի շատ է սկսել գիտակցել այն դերը, որ կատարում ենք այստեղ, կապանցիների համար ավելի տեսանելի ու դարձել այն աշխատանքները, որ իրականացնում ենք թե՛ ձեռնարկության ներսում, թե՛ դրանից դուրս՝ համայնքում: Լուրջ ձեռքբերումներ ունենք նաև անվտանգության հետ կապված եւ ոչ միայն ավելի անվտանգ աշխատատեղեր ստեղծելու առումով, այլև մարդկանց մտածելակերպի փոփոխության: Բավականին աշխատանքներ ենք տարել ու հաջողություններ գրանցել բնապահպանական ոլորտում: Մենք պոզիտիվոր ենք դերակրել ենք ջրի շրջանառու համակարգ, որը թույլ է տալիս արտանետումներ չկատարել քայլին ավազան, կարողացել ենք նաև աստիճանաբար հավաքել հին հանքուղիների արտահոսքերը եւ ուղղորդել դեպի հարստացման գործընթաց: Աշխատանքային պայմանների չափանիշների շեշտակի դրական փոփոխություններ են վերջին թվարկածս ընկերությունը դարձրել են ավելի լավ եւ նպաստել, որ աշխատակիցներն ավելի լավ աշխատեն, ավելի լավ վերաբերվեն իրենց

գործին:

Սկսել ենք ֆարիկայի ընդլայնման աշխատանքները, որը թույլ կտա կրկնապատկել կոմբինատի հզորությունները, հուսով ենք՝ այդ աշխատանքները կավարտվեն օգոստոսի առաջին շաբաթում: Աստիճանաբար տեղ են հասնում հանքարդյունահանման նոր սարքավորումներն ու տեխնիկան: Ընդլայնման արդյունքում ամենամեծ ձեռքբերումը կլինի այն, որ, ի վերջո, կկարողանանք հասնել ավելի ցածր ինքնարժեքի արտադրանքի մեկ միավորի համար, ինչը մեզ կդարձնի ավելի մրցունակ, մեր աշխատակիցներն էլ ավելի ապահովված կզգան իրենց աշխատանքում:

– Դիմոյի սեփականատերը օտարերկրյա կազմակերպություն է, Գուբ էլ աշխատանքի միջազգային փորձով եք եկել Կապան: Ինչպիսի՞ն է ձեզ համար Հայաստանի տնտեսական, օրենսդրական միջավայրը ներդրումային քաղաքականության, այստեղ բիզնես զարգացնելու առումով:

– Իմ տպավորությամբ, ՀՀ կառավարությունը ողջունում է օտարերկրյա ներդրումները, միջավայրը բաց է ներդրողների համար: Մեր աշխատանքային լավ հարաբերությունները կառավարության հետ նույնպես դրա ապացույցն են:

Գիտեք, որ մենք նախատեսում ենք ստորգետնյա մշակմանը զուգահեռ անցում կատարել բաց հանքի մշակմանը: Կառավարության հետ մեծ համագործակցություն եւ աշխատանք է ենթադրվում, որպեսզի կարողանանք ծրագրող կյանքի կոչել:

Ինչ վերաբերում է օրենսդրությանը, բնականաբար, միշտ էլ դժվարություններ կան, օրենքները միշտ կարող են էլ ավելի լավ լինել, դա ժամանակի հարց է, շարունակական, կառուցողական աշխատանքի արդյունք, որն այսօր իրականացնում է Հայաստանի կառավարությունը: Մենք դա տեսնում ենք, որովհետեւ շատ փորձեր են արվում օտարերկրյա ներդրողների համար օրենսդրություն ավելի լավ

վր դարձնելու ուղղությամբ:

– Իսկ ինչպիսի՞ն հարաբերություններ են հաստատվել ձեր և տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների միջև:

– Մենք գերազանց աշխատանքային հարաբերություններ ունենք Կապանի քաղաքապետարանի եւ Սյունիքի մարզային իշխանությունների հետ: Հատկապես քաղաքապետարանի հետ շարունակական եւ պարբերական համատեղ աշխատանք է իրականացվում: Պետք է նշել, որ քաղաքապետն ամեն կերպ փորձել է օժանդակել մեզ ծրագրերի իրականացման հարցում: Բացի Կապանից, մենք համագործակցում ենք նաև գյուղերի՝ Աճանանի եւ Գեղանուշի համայնքապետարանների հետ:

– Պարոն Ֆալետտա, ի՞նչ ռազմավարություն եք որդեգրել Գուբ եւ սեփականատերերը, դեպի ո՞ւր եք տանում այս ձեռնարկությունը:

– Մեր հեռանկարը եւ գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը հզորությունների ավելացումն է, ինչը որոշակիորեն արդեն արվել է, բայց պիտի շարունակվի բաց մշակման համակարգին անցնելու համար: «Դիմո գոլդի» իրական ապահովումը բաց մշակման համակարգն է, որովհետեւ ինչքան ավելի ցածր հորիզոններում ենք սկսում աշխատել, այնքան երակները նեղանում են, եւ ավելի դժվար է լինում աշխատել: Ստորգետնյա արդյունահանումը սահմանափակ կյանք ունի. եւ չէի ցանկանա անհանգստացնել մարդկանց, բայց հնարավոր է՝ այդ կյանքը 5-7 տարի լինի: Իսկ բաց մշակման համակարգի պոտենցիալը իսկապես է: Դեռեւս չկան հետախուզության վերջնական արդյունքները, բայց այն կարող է 20-30 տարվա կյանք ունենալ:

– Գուբ Նոր տարվա նախօրին նախանշեցիք 2010-ին ընկերության համար կարելի էր երկու նպատակ՝ տարվա վերջին ձեռնարկությունը դարձնել շահութաբեր եւ հասնել տարեկան 600 հազար տոննա հան-

քաքարի մշակման: Շահութաբերության մասին Գուբ արդեն մշեցիք, այդուամենայնիվ, որքանո՞վ են իրականություն դարձել Ձեր ակնկալիքները:

– Կարծում եմ՝ կոնկրետ այդ երկու հարցի հետ կապված իմ կանխատեսումներն իրականություն են դառնում: Իհարկե, մետաղի գների բարձրացումն էլ որոշակիորեն թույլ տվեց, որ հասնենք շահութաբերության, բայց մյուս կողմից էլ լուրջ աշխատանք տարվեց այդ ուղղությամբ, եւ երկրորդ եռամսյակը շատ ավելի արդյունավետ էր: Ինչ վերաբերում է հզորություններին, տվյալ պահին դրանք կանխատեսումային մի քիչ ցածր են, բայց ֆարիկայում աշխատանքներն ավարտելուց հետո՝ օգոստոս-սեպտեմբերին, կկարողանանք հասնել նշված արտադրողականությանը:

– Կենտրոնական հանքի շահագործումից հրաժարվելու «Դիմո գոլդի» փաստարկները բազմիցս են հնչել: Բիզնեսի օրենքները հասկանալի են մասնագետներին, բայց տեղացիները դրան նայում են նաև համայնքի շահերի տեսանկյունից: Ի վերջո, ինչու՞ սեփականատերը հրաժարվեց Կենտրոնական հանքավայրը շահագործելու լիզենզիայից:

– Կենտրոնական հանքավայրը ժամանակին հիանալի հանքային մարմիններից բաղկացած հանքավայր էր եւ խորհրդային Միությանը տասնամյակներով բարձրորակ պղինձ է մատակարարել: Բայց այդ հանքային մարմինների մեծամասնությունը, դրանց գլխավոր գոտիները նախկինում արդեն արդյունահանվել են, եւ ստորգետնյա եղանակներով այդ երակների ցածր հորիզոններում գտնվող ավելի նեղ մասերն արդյունահանելը լուրջ խնդիրների հետ է կապված: Եվ մենք այդ հանքում շատ լուրջ գումարներ էինք կորցնում, բավականին վնասներ կրում: Այդ հանքավայրի հետ կապված հաջորդ հիմնախնդիրը անվտանգությունն էր: Նախկինում շահագործվելու ընթացքում այդ հանքում շատ ուշադրություն

չէր դարձվել անվտանգության հարցերին: Իսկ մեզ նման ընկերությունը դրան շատ մեծ կարևորություն է տալիս: Շատ ժամանակ ու միլիոնավոր դոլարներ կապահանջեին այնտեղ վերահաշնայն ու այն բոլոր միջոցառումներն իրականացնելը, որոնք անհրաժեշտ կլինեին անվտանգ աշխատանքի համար: Հսկայական ջանքեր կապահանջվեին այդ հանքավայրը միջազգային չափանիշներին հասցնելու համար: Բայց, ի վերջո, լուրջ վնասներ բերող եւ անարդյունավետ հանքավայր է:

Հանքավայրի կոնսերվացման հետ կապված աշխատանքները գրեթե ավարտել ենք, բայց հանձնարարումներն ակտ կառավարության հետ դեռեւս չկա, կլինի այն ժամանակ, երբ հստակ կպատկերացնենք, թե ինչպես է կատարվելու գործընթացը: Սպասում ենք էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության գործողություններին: Մենք կոնսերվացման լուրջ նախագիծ ենք պատրաստել, որն անցել է բոլոր փորձաքննությունները, հաստատվել, հանրային լուսման են անցկացվել այդ հարցով: Արել ենք այն, ինչ որ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ:

– Իսկ ի՞նչ հանգրվանի է հասել Շահումյան բանավանի տարահանման գործընթացը, բնակիչների փոխհատուցման հետ կապված բոլոր հարցերը լուծվե՞լ են:

– Ցանկացած աշխատանք, որ տարվում է մեծ խումբ մարդկանց հետ, իր մեջ, անշուշտ, խնդիրներ է ներառում, այս դեպքն էլ բացառություն չէ: Բայց ասեմ, որ խնդիրների գերակշիռ մասը լուծվել է, գործարքների մեծ մասն արված է: Արոշակի տեխնիկական խնդիրների գաղտնառով դրանց մի փոքր մասն է մնացել:

– Պարոն Ֆալետտա, գիտե՞ք, որ կոմբինատի 13 աշխատակից դատարան է դիմել ավելի վաղ աշխատանքի տարիների գիշերային աշխատավարձերը ստանալու հայցով: Ի՞նչ լուծում եք պատրաստվում տալ այդ հարցում:

– Այդ մարդկանց հայցը 2005-2006թթ. է վերաբերում, երբ «Դանդի» չէր այստեղ սեփականատերը, այսինքն՝ խնդիրը պետք է հասցեագրվեր նախկին սեփականատիրոջը: Այնուամենայնիվ, այսօր խնդիրը մեր առջեւ է ծառայել, եւ լուծումը պետք է մենք գտնենք: Բայց մի բանի անորոշ հարցեր կան, որոնք պատասխան են պահանջում՝ կապված հաշվարկման մեթոդների հետ եւ այլն, մինչեւ կկարողանանք վերջնական լուծում տալ խնդրին: Անշուշտ, երբ մեր ընկերությունը հանձնված կլինի, որ եղել են թերացումներ (թեկուզ նախկին սեփականատերերի ժամանակվա), որը պետք է շտկել, կզգանք այդ քայլին: Ինչ վերաբերում է «Դանդի» սեփականատերերի ժամանակվա հարցերին, մենք դրա համար ըստ ժամանակացույցի, վճարումներ ենք կատարում գիշերային աշխատանքների համար:

– Ձեռնարկությունն արհմիության նոր նախագահ ունի: Ի՞նչ փուլում է կոլեկտիվ պայմանագրի կնքումը:

– Արհմիությունն ինձ է ներկայացրել կոլեկտիվ պայմանագիր ստորագրելու առաջարկ: Այս պահին մենք բնարկում եւ ուսումնասիրում ենք այն, դեռ այդ փուլն է:

– Քաղաքի հիմք հանդիսացող մասն ձեռնարկության տնօրենից մարդիկ երբեմն ակնկալում են ավելին, քան նրա պարտականություններն են: Կապանն այսօր բնապահպանական տեսանկյունից ռիսկային գոտի է դարձել: Թե՛ մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունները, թե՛ բնապահպանական պետական տեսչությունն այստեղ օդի Շարունակությունը՝ էջ 11

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Պարոն Մարկոսյան, վերջերս «Այուրյաց երկիր» տված հարցազրույցում հուշ համառոտ անդրադարձեց կատարել 2006 թվականից ի վեր Կապանի կոմբինատում կատարված ներդրումներին: Հաշվի առնելով հարցի կարեւորությունը՝ դրա հանդեպ հետաքրքրությունը՝ խնդրում ենք ավելի համաձայնորեն անդրադառնալ խնդրո առարկային:

– 2006 թվականից ի վեր, երբ ընկերության հիմնական բաժնետեր դարձավ “Dundee Precious Metals” ընկերությունը, բաժնետերերը սկսեցին եւ մինչ օրս էլ շարունակում են ներդրումները «Դինո գոլդում»: Մեծ գումարներ են ներդրվել երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար, որը 2008 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով դադարեցվեց, սակայն աշխատանքները պահպանվում ենք վերսկսել այս տարվա օգոստոսից, քանզի ընկերության այսօրվա ֆինանսական վիճակը դա թույլ է տալիս: Շոշափելի քայլեր են կատարվել հանքի եւ նրա ենթակառուցվածքներ



Լուսանկարը՝ Ա.Աղայանի

նախարարության ստուգումն արդեն ընթացքի մեջ էր: Ստուգման արդյունքներով կազմվել էր ակտ, որի հետ մեր մասնագետները համաձայն չէին, խոսքը վերաբերում է մարված պաշարների մեթոդաբանության հաշվարկին: Արդյունքում մենք ակտը բողոքարկեցինք, եւ վարչապետի հանձնարարությամբ իրականացվեց կրկնակի ստուգում: Վերջնական ակտը, որ կազմվեց կրկնակի ստուգման արդյունքում, ավելի իրականությանը մոտ էր եւ ընդունելի երկու կողմերի համար: Այնպես որ՝ շրջանառվող խոսակցությունները չափազանցված են:

– Պարոն Մարկոսյան, ես մեկ անգամ ճշտեց խտանյութի բաղադրության, նրանում մետաղների հարաբերակցության խնդիրը, քանի որ դա նույնպես հանրային քննարկումների առարկա է դառնում հաճախ: Շարունակելով հարցը՝ ավելացնեմք, որ որոշ մասնագետներ խտանյութի մեջ պարունակվող ոսկին եւ արծաթը չեն համարում ուղեկցող մետաղներ այն պատճառով, որ ոսկու, արծաթի, պղնձի եւ ցինկի հարաբերակցությունը կազմում է 3:1:2:1,5, իսկ ուղեկցող մետաղները՝ կադմիումը, թելուրը, սելենը, ինդիումը, գալիումը եւ ծծումբը, ընկերության կողմից իբր չեն հաշվառվում ըստ պատշաճի:



– Ընկերության ֆինանսական միջոցները ձեւավորվում են պղնձի եւ ցինկի խտանյութերի վաճառքի արդյունքում: Գնորդը մեզ վճարում է նշված խտանյութերում առկա վճարվելիք մետաղների համար, պղնձի խտանյութում պղնձն է, ոսկին եւ արծաթը, ցինկի խտանյութում ցինկն է, արծաթը եւ ոսկին: Ինչ վերաբերում է խտանյութում առկա այլ մետաղներին, ապա դրանք համարվում են «տուգանային» մետաղներ, եւ եթե դրանց պարունակությունը գերազանցում է թույլատրելի սահմանը, ապա ընկերությունը

ԱՐԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ.

«Կոմբինատն իր արտադրության ծավալները կրկնապատկելու կուրս է վերցրել»

Հարցազրույց «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ ֆինանսական մենեջեր, տնտեսագիտության թեկնածու Արա Մարկոսյանի հետ

րի զարգացման գործում (հանքի ճանապարհների բարեկարգման, օդափոխության համակարգի, ջրահեռացման համակարգի բարելավման եւ այլն), մեծ ներդրումներ են կատարվել նաեւ ընկերության էներգամատակարարման համակարգը թարմացնելու եւ արդիականացնելու (նոր ենթակայանների տեղադրում, էլեկտրական մալուխների նորացում, կառավարման նոր վահանակների տեղադրում), ինչպես նաեւ հանքի համար նոր տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Այս պահին իրականացվում է հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրական կարողությունների ընդլայնում եւ տեխնիկական վերազինման ծրագրերի իրագործում: Օգոստոս ամսից պլանավորում ենք արտադրական ծավալները հասցնել 600 հազար տոննա տարեկան հանքաքարի վերամշակման բնագծին: Այժմ ֆաբրիկայում տեղադրվում եւ կարգաբերվում են նոր ֆլոտացիոններ, որոնց մի մասն արդեն շահագործվում է, իսկ մյուս՝ ավելի հզոր ֆլոտացիոնները, շահագործման կհանձնվեն շատ շուտով. այնպես որ՝ հարստացուցիչ ֆաբրիկայի համար նախատեսված տեխնիկական վերազինման պլաններն արդեն իրականացվում են: Միաժամանակ, որպեսզի նախատեսված չափով հանքաքար մատակարարվի ֆաբրիկա, ստորգետնյա հանքում եւս իրականացվում են նոր տեխնիկայով վերազինման աշխատանքներ: Նոր մեքենասարքավորումների մի մասն արդեն շահագործվում է, մի մասը ձեռնարկության մեքենայական հավաքակալանում է, իրականացվում է կարգերի ուսուցում՝ նորագույն տեխնիկական բանցեցելու համար: Ինչ վերաբերում է բաց հանք



քի ներդրումային ծրագրերին, այն ընթացքի մեջ է, ներկայումս իրականացվում են Շահունյան բանավանի հողերի ձեռքբերման աշխատանքները, որը կավարտվի շուտով, ինչպես նաեւ մշակվում է հանքի մոդելը: Մեր նպատակն է 2011թ. վերջին բաց հանքը շահագործել: Նշենք, որ նախնական քննարկման փուլում է նաեւ հանքաքարի արդյունահանման ծավալների խնդիրը: Այնպես որ՝ ընկերության ներդրումային ծրագրերը շարունակվում են, եւ ինչպես տեսնում եք, այս ամենը խոսում է ընկերության երկարաժամկետ ներդրումային ծրագրերի մասին: – Պարոն Մարկոսյան, կարծիք է հնչել, որ երկրաբանահետախուզական աշխատանքներում 25 միլիոն դոլար գումարի ներդրումն

այնքան էլ նպատակահարմար չէր, որ ուսումնասիրություններն էական փոփոխություններ չեն մտցրել պաշարների քանակի եւ որակի մասին նախկինում եղած տվյալների մեջ: – Թույլ տվեք չհամաձայնել նման դիտարկման հետ. բոլորի աչքի առջեւ են, թե վերջին երեք-չորս տարում ինչ երկրաբանահետախուզական աշխատանքներ են իրականացվել, ինչ տեխնիկա է ներկրվել: Այդ ամենի արդյունքը եղել է այն, որ ներկայումս ձեռք են բերվում Շահունյան բանավանի հողերը, մշակվում է բաց հանքի մոդելը, որը շատ շուտով իրականություն է դառնալու: Ամիրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ ներդրողները մինչեւ ամառվել խոշոր ներդրումներ կատարելը (երեկի թե ոչ որ չի կասկածում, որ

բաց հանքի ծրագիրը կլանելու է հսկայական ներդրումներ) ցանկանում են համոզված լինել բավարար պաշարների առկայության եւ ներդրումների հետագա նպատակահարմարության մեջ: – 2007թ. չորրորդ եռամսյակից մինչեւ 2008թ. երրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում հանքավայրերի շահագործման հետ կապված հարցերն ուսումնասիրել է ՀՀ բնապահպանության նախարարությունը եւ, մեր ունեցած տեղեկություններով, հայտնաբերել հանքավայրի օգտագործման խախտումներ: Որքանով է հավաստի շրջանառվող այդ խոսակցությունը: – Երբ 2008թ. հոկտեմբերին տեղափոխվեցի «Դինո գոլդ» աշխատանքի, բնապահպանության վճարում է տուգանքներ: – Ըստ Համաշխարհային բանկի երեսնյան գրասենյակի՝ 2010թ. անցած չորս ամսվա արդյունքով տնտեսության 13 տոկոս աճ է արձանագրվել հանրապետությունում: Կարելի՞ է այդ թիվը տարածել նաեւ ձեր ձեռնարկության վրա: – Մեր ձեռնարկության դեպքում ծավալներն ավելի մեծ աճ են կազմելու, սակայն պետք է հաշվի առնել մեկ համազանց եւս. նախորդ տնտեսական տարին մեր ընկերության համար ելակետային չի կարող լինել, քանի որ տարվա չորս ամիսները չենք աշխատել: Ինչպես արդեն նշեցի, Համաշխարհային բանկի նշած տնտեսական աճը մեր ընկերության համար 2010-ի վերջում ավելի մեծ է լինելու

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը վերազինվում է, արտադրական հզորությունները՝ ավելանում

«Դինո ԳՄԲ» ՓԲԸ-ում ընթացող արտադրական գործընթացների, հեռանկարային ծրագրերի, տեխնիկական ընդլայնման ու վերազինման մասին է ընկերության գլխավոր ինժեներ Սերգեյ Կոստորոտովի հետ հարցազրույցը



Սերգեյ Կոստորոտով

Պարոն Կոստորոտով, ի՞նչ ճանապարհ եք անցել մինչ այստեղ աշխատանքի ընդունվելը:

– Ավարտել եմ Մոսկվայի երկրաբան-հետախույզական ինստիտուտը, մասնագիտությամբ լեռնային ինժեներ եմ. ներ մասնագիտացումս բաց հանքային աշխատանքներն են: Բուհն ավարտել եմ 1975-ին և աշխատանքի անցել, այնպես որ վաղուց եմ լեռնային արդյունաբերության մեջ: Նախագծային աշխատանքների բավականին փորձ ունեմ. մոտ 20 տարի Ռուսաստանում աշխատել եմ նախագծային ինստիտուտում, ինժեներից հասել մինչև նախագծերի ղեկավարի պաշտոնի: Հետո արդեն աշխատել եմ մի քանի արդյունաբերական ընկերություններում՝ հիմնականում գլխավոր ինժեներ, կապիտալ շինարարության վարչության տնօրեն: Արդեն մի տարի է՝ աշխատում եմ Կապանում:

– Ինչո՞վ է զբաղվում այս ընկերությունում գլխավոր ինժեները:

– Գլխավոր ինժեների գործառնությունը մեզ մոտ այնպիսին չէ, ինչպիսին եղել են խորհրդային ժամանակներին: Երբ, ըստ էության, մասնագիտացված երկրորդ պաշտոնյան էր: Արտասահմանյան ընկերություններում մի քիչ այլ կերպ է ձևավորվում արտադրությունը. այստեղ ավելի շատ լիազորություններ, պարտականություններ, պատասխանատվություն է դրվում բաժինների, ենթակառուցվածքների ղեկավարների վրա: Օրինակ՝ ստորգետնյա հանքն ունի իր ղեկավարը, եւ նա է պատասխանատու այդ աշխատանքի համար, նույն ձևով ֆաբրիկայի բոլոր ենթակառուցվածքները, արտադրամասերը ենթարկվում են ֆաբրիկայի պետին, եւ նա է այդ ոլորտում առաջին դեմքը, չնայած ասեմ, մեզ մոտ ամեն ինչի համար, ի վերջո, պատասխանատու է տնօրենը: Ես նրան օգնում եմ հեռանկարային ծրագրերի ոլորտում, ինձ հանձնարարված է ղեկավարել բոլոր նախագծային աշխատանքները, որոնք ընկերու-

թյունը նախատեսում է կատարում է: Ես այդ բոլոր նախագծերը համակարգում եմ, կնքում պայմանագրեր, կազմում տեխնիկական առաջադրանքները եւ ուղղորդում այդ նախագծերը՝ սկսած նախագծային ընթացքից մինչև տեղում դրանց տեխնիկական իրագործումը: Մի խոսքով, պարտականությունս ընկերության զարգացման հեռանկարի, կարճաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի պատասխանատվությունն է:

– Ի՞նչ կոնկրետ խնդիրներ է ընկերությունը լուծել վերջին տարիներին և նախատեսում լուծել առաջիկայում:

– Ես չեմ ուզում պատմել, թե ինչ կար այստեղ նախկինում, կարծում եմ՝ շատերը գիտեն... Շատ բացասական գործոններ կային. առաջին հերթին արտադրությունը ցածր շահութաբերություն ուներ, իսկ առանձին ժամանակաշրջաններում ընդհանրապես ոչ շահութաբեր էր, ձեռնարկությունը վնասով էր աշխատում: Հասկանալի է՝ ոչ մի սեփականատեր դա համարվել չի կարող: Բոլորս հիմա շուկայական հարաբերություններում ենք գործում, հետևաբար ձեռնարկությունը պահում ենք խտանյութի իրացման հաշվին: Մինչ անցած տարվա ավարտը վնասաբերությամբ էինք աշխատում: Այս տարվանից սկսած գործական շահույթ ենք ունեցել եւ հիմա արդեն երկրորդ եռամսյակն ենք ամփոփում. վերջին տարիների ընթացքում առաջին անգամ ինչ-որ շահույթ ենք ստանում: Դա մեծ ձեռքբերում է, աճեց հանքաքարի արդյունահանումը, ընդհանուր արտադրողականությունը, այսինքն՝ դա մեր արտադրական ցուցանիշների արտացոլումն է:

Եթե, օրինակ, անցած տարի ֆաբրիկան օրական 800-900 տ հանքաքար էր մշակում, հիմա՝ մոտ 1600 տ. աճը կրկնակի է: Այժմ կոմբինատի ընդլայնման աշխատանքներ են ընթանում, որը թույլ կտա ավելացնել արտադրական հզորությունները: Անցած տարվա տվյալներով հասել էինք տարեկան մինչև 600 հազար տ հան-

քաքարի մշակման, մեր ներկա պլանային ցուցանիշներով օգտուտսին պետք է հասնենք տարեկան 600 հազար տոննայի մշակման: Այսինքն եթե նայենք մեր օրական ցուցանիշը, արդեն գրեթե հասել ենք դրան: Նաև ձեռք ենք բերում նոր սարքավորումներ, վերանայում ենք արդյունահանման տեխնոլոգիաները, դա մեզ թույլ է տալիս բարձրացնել արտադրողականությունը, նվազեցնել ծախսերը, ընդլայնում ենք ֆաբրիկան, այնտեղ հիմա ավարտվում են նախագծային աշխատանքները, այս ամենին, բնականաբար, հետևում է պղծամբարի ոչ մեծ վերակառուցումը, որը կրկին նախատեսված ցուցանիշների ապահովման համար է արվում:

– Իսկ ավելի հեռու ապագայի համար ի՞նչ պլաններ ունեք:

– Այդ՝ ավելի հեռու պլաններն առաջին թղթի վրա ծրագրեր են: Մոտակա ամենահեռանկարային ծրագիրը բաց հանքի հետ է կապված: Հիշելի համեմատ, որ շուկայում բարձրացել են մետաղների գները, փոփոխվել են հանքաքարի որակի հանդեպ պահանջները, պլանավորում ենք վերագնահատել Շահունյանի ծննդավայրի պաշարները, որպեսզի հանքի վերին մասը վերամշակենք բաց եղանակով: Դա սկզբունքորեն փոխում է ծննդավայրի հանդեպ մոտեցումը: Այսօր վերագնահատում կատարելով՝ անցում ենք կատարում այնպիսի գոտիներին, որոնք թույլ են տալիս աշխատել ավելի հզոր հանքային տեխնիկայով, ավելացնել արտադրողականությունը: Հիմա ողջ աշխարհում են ման վերագնահատումներ ընթանում:

Նախկինում՝ մետաղի ցածր գների պարագայում, ձեռնուռ չէր շահագործել բաց հանքը, բայց բաց աշխատանքները միշտ ավելի ցանկալի էին, քան ստորգետնյան, եւ ավելի նվազ վտանգավոր են:

– Պարոն Կոստորոտով, ի՞նչ եք փոխել ընկերության աշխատանքներում, որը հնարավորություն է տվել բարձրացնել արտադրողականությունը:

– Սկզբունքորեն չփոխելով ոչինչ՝ մենք շեշտադրում ենք կատարել հետեւյալ գործոնների վրա՝ կարգապահություն, աշխատանքների անվտանգության բարձրացում... Շատ մարդկանց էինք հարկադրված ազատել հենց այդ բացթողումների պատճառով, չնայած սա այնքան էլ ժողովրդահանձ մեթոդ չէ: Շատ մարդիկ կային, որոնք չկարողացան ժամանակակից պայմաններում աշխատել, եւ ալկոհոլի օգտագործումն էր տարածված, եւ պարզապես չէին կատարում իրենց արտադրական նորմաները, աշխատանքից բացակայում էին:

լու, որովհետեւ ընկերությունն իր արտադրության ծավալները կրկնապատկելու կուրս է վերցրել:

– Համաշխարհային բանկի նույն գրասենյակի կառավարիչն այն միտքն է հայտնել նաև, որ Հայաստանի տնտեսության 30-40 տոկոսը, հատկապես հանքարդյունաբերությունը, ստվերային է, Ձեր վերաբերմունքն այդ գնահատականին:

– Երեւույթին տեղյակ եմ. ժամանակ առ ժամանակ պաշտոնական եւ ոչ պաշտոնական աղբյուրները տարբեր ցուցանիշներ են ներկայացնում ստվերային տնտեսության մասին: Պարզապես պետության խնդիրն է բացահայտել անպարտաճանաչ հարկատուներին եւ նրանց բերել հարկային դաշտ: Ինչ վերաբերում է մեր ձեռնարկությանը, ապա մեզ մոտ ամեն ինչ թափանցիկ է եւ օրինական, ֆինանսական հաշվետվությունները միջազգային աուդիտ են անցնում, հարկային տեսչությունը պարբերաբար ուսումնասիրություններ եւ ստուգումներ է կատարում ընկերությունում, իսկ բոլոր հարկերը վճարում ենք ժամանակին եւ ամբողջ ծավալով: Որպես արտահանող ձեռնարկություն՝ հանրապետությունում վճարված ավելացված արժեքի հարկը պետությունը պարտավոր է վերադարձնել ընկերությանը օրենքով սահմանված կարգով, որը վերջին ժամանակներս անհամեմատ դյուրացվել է. նախկինում դա մեծ խնդիրներ էր առաջացնում:

– Մեր հաջորդ հարցն արտադրանքի իրացմանն է վերաբերում: Խնդիրներ ծագո՞ւմ են խտանյութի առաքման եւ իրացման ճանապարհին:

– Ընկերությունում թողարկված խտանյութերը միջազգային մետաղական բորսաներում գնանշված ապրանքներ են, եւ դրանք իրացման հետ կապված ընդհանրապես խնդիրներ չեն ծագում, ընդհակառակը ձեռքբերման համար հերթ է գոյանում: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի «այիկ» ամիսներին, երբ մետաղական բորսաներում մետաղների գներն այնքան էին ընկել, որ արտադրելը դարձել էր աննպատակահարմար, արտադրանքի նկատմամբ պահանջարկն առկա էր: Ներկայումս մետաղների գները վերականգնվել են, եւ արտաքին շուկաներում այդ արտադրանքների նկատմամբ պահանջարկը կրկին մեծացել է: Այս ամբողջ ժամանակահատվածում միայն ոսկու գնանկում չնկատվեց, այլ հակառակը, այն ավելի արժեւորվեց՝ հատկապես 1200 դոլարի սահմանը մեկ ունցիայի համար: Դա բացատրվում է նրանով, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում մարդիկ սկսեցին ոսկին դիտարկել որպես ներդրման միջոց: Ընդհանրապես, ըստ իս, հանքարդյունաբերության ոլորտում ճգնաժամը ներկայումս հաղթահարված է, դեռ ավելին՝ լեռնահանքային ձեռնարկությունները վերելքի նոր փուլ են թեւակոխել:

– 2010-ի նախօրեին, երբ զրույց ունեցանք ձեռնարկության գլխավոր տնօրեն Ռոբերտ Ֆալետտայի հետ, նա հույս հայտնեց, որ այս տարում կոմբինատը շահութաբեր կդառնա: Ի դեպ, որոշ մասնագետներ երբեմն տարակուսանք են հայտնում, թե ինչու նախորդ տարիներին ձեռնարկությունը չէր արժանանում շահութաբեր: Ի՞նչ կասեք այդ դիտարկման առիթով:

– Տնօրենի ասածը, անշուշտ, իրականություն կդառնա: Ես չեմ ցանկանում կոնկրետ թվեր հրապարակել, քանզի երբ հրապարակվեն ֆինանսական հաշվետվությունները, այդ փաստը, կարծում եմ, հայտնի կդառնա բոլորին: Մյուս կողմից՝ ձեր նշած մասնագետները մոռանում են, որ 2009-2010թթ. ութ ամիսներին ձեռնարկությունը դադարեցրել էր գործունեությունը, բայց 1200-ից

ավել աշխատողների շարունակում էր աշխատավարձ վճարել: Այդ ժամանակ նաեւ պարոն Ֆալետտան ասել էր, որ 2010թ. ձեռնարկության զարգացման հիմնական ուղղությունները լինելու են հանքի ընդլայնումը եւ արտադրության ծավալների կրկնապատկումը, եւ ինչպես տեսնում եք, այդ ամենն իրականություն է դառնում:

– Բազմաթիվ նյութեր, սարքավորումներ, պահեստամասեր են օգտագործվում «Դինո ԳՄԲ» ՓԲ ընկերությունում: Որքանով տեղյակ ենք, ձեռնարկությունը որոշ նյութեր ձեռք է բերում հենց Կապանից: Հետաքրքիր է, ի՞նչ քաղաքականություն է իրականացվում այդ ուղղությամբ:

– Պարոն Ֆալետտայի դիրքորոշումն այն է, որ ձեռք բերված նյութերն ունենան հայկական ծագում՝ օգտագործելով տեղական ընկերությունների արտադրանքը՝ այսպիսով հավելյալ աշխատատեղեր ստեղծելով մեր տարածաշրջանում: Եվ հասել ենք մի հանգրվան, երբ օգտագործվող նյութերի մոտ 70 տոկոսը հայկական ծագում ունի: Իսկ մյուս մասը ձեռք է բերվում արտերկրից. դրանք հիմնականում այն ապրանքներն են, որոնք, ինչքան էլ ցանկանանք, Հայաստանում ձեռք բերել հնարավոր չէ:

– Պարոն Մարկոսյան, մոտ երկու տասնամյակ է՝ Հայաստանի հաղորդակցության ոլորտները, հիմնականում երկաթուղին, շրջափակված են: Եթե այդ շրջափակումը չլիներ, ձեր արտադրանքի ինքնարժեքը որքանով կիջներ: Նման հաշվարկ կատարվե՞լ է ձեռնարկությունում:

– Նման հաշվարկներ անելու մասին սկսեցինք մտածել, երբ խոսակցություններ սկսվեցին Թուրքիայի հետ սահմանը բացելու վերաբերյալ: Այդ դեպքում ձեռնարկության տրանսպորտային ծախսերը 25-30 տոկոս կկրճատվեին, իսկ ինքնարժեքի մասով տեղի կունենար մոտ 15 տոկոսով նվազում, ինչպես նաեւ խտանյութի արտահանման այլընտրանքային ճանապարհներ կունենայինք: Բացի նրանից, որ այժմ տրանսպորտային ծախսերը բավականին բարձր են, նաեւ ճանապարհն է անհարմար ու անբարեկարգ: Մենք նաեւ որոշ հույսեր ենք կապում Իրան-Հայաստան նոր ճանապարհի ու երկաթուղու կառուցման հետ, ինչի մասին խոսակցությունները վերջին շրջանում ավելի են ակտիվացել:

– Բայց դա մոտ ապագայի խնդիր է:

– Մեր ծրագրերը նույնպես երկարաժամկետ են: Երբ բաց հանքի գործարկումն իրականություն դառնա, դա ձեռնարկության կյանքը կերկարացնի 20-25 տարով, այնպես որ՝ մեզ լավ է բարեկարգ ճանապարհները շատ են պետք:

– Որպես ձեռնարկության ֆինանսական մենեջեր՝ ի՞նչն է առավել շատ Ձեզ այսօր մտահոգում:

– Ինձ առավել հուզում է արտաբյուրեքի փոխարժեքի նվազումը: Մեր զրույցում մի քանի անգամ նշեցի, որ միջազգային բորսաներում մետաղների գները բարձրանում են, ինչն ուրախացնող փաստ է, մեր արտադրանքը հարյուր տոկոսով արտահանվում է, հետևաբար գնորդները մեզ վճարում են արտաբյուրեքով, որը վերածվում է դրամի՝ վճարվելով մատակարարներին, աշխատակիցներին, կատարելով այլ ծախսեր: Սակայն դրամի արժեւորումը մեր ընկերության համար պատճառ է դառնում լուրջ ֆինանսական կորուստների: Հունվարին դոլարի փոխարժեքը եղել է 378, մարտի վերջին՝ 400, հիմա հասել է 369 դրամի: Նման իրավիճակում դրամական հոսքերը կառավարելու առումով նույնպես խնդիրներ են ծագում, որը նպաստավոր հանգամանք չէ արտահանողների համար:

Ջրույցը՝ ՎԱԿՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆԻ

ԿԱԴՐԵՐ

Նոր սեփականատիրոջ օրոք աշխատատեղերի թիվը չի կրճատվել



Ընկերության որդեգրած կադրային քաղաքականության, մասնագետներ ընտրելու սկզբունքների, աշխատուժի թվաքանակում արձանագրված շարժի մասին է զրույցը «ԴԳՄԲ» ՓԲԸ մարդկային ռեսուրսների բաժնի պետ Լիանա Ջալալյանի հետ

Տիկին Ջալալյան, քանի՞ աշխատող ունի այժմ ընկերությունը, ավելանում, թե՞ նվազում է նրանց թիվը, ո՞ւմ եք ձգտում աշխատանքի ընդունել:

Այս տարվա հունվարին մենք ունեցել ենք 1075 աշխատող, մարտ-ապրիլի կրճատումներից հետո թիվը իջավ մինչև 1024-ի, այժմ հասել է 1078-ի (տարվա միջինը՝ 1050): Բայց առաջիկայում աշխատողների քանակի ավելացում է սպասվում, իհարկե, դա կլինի կոնկրետ ժամկետի համար նախատեսված աշխատանք, որովհետև օգոստոսից Ծա-հունյանում նորից հետախուզական աշխատանքներ են սկսվելու: Հունվարի տվյալներն այժմվա հետ համեմատելով՝ տեսանելի է, որ մեր կադրեր են ներգրավվում:

Իսկ կադրեր ընդունելու հիմնական քաղաքականությունը սա է. ձգտում ենք ներգրավել երիտասարդ, բարձրագույն կրթությամբ կադրեր: Չմայած որ սա հանքային արդյունաբերություն է, բանվորական անձնակազմի համար էլ ձգտում ենք բարձրագույն կրթությամբ անձանց ընդգրկել: Ավելի արդյունավետ է մեզ համար աշխատանքում ներգրավել լեռնահանքային մասնագիտություններ սովորած մարդկանց, ովքեր, գիտելիքի տեսական մասը ունենալով, պրակտիկորեն ավելի հեշտ են աշխատում և հետագայում ավելի լավ ու որակյալ կադրեր են դառնում: Օրինակ, վերջերս տնօրենը հաստատել է հինգ պայթեցնողի օգնականի հաստիք, աշխատանքի ընդունվածները բուհավարտ 22-25 տարեկան երիտասարդներ են: Այսինքն՝ չենք հետևում այն սկզբունքին, որ պիտի միշտ նույն մարդիկ այստեղ հնարավորություն ունենան: Երիտասարդն ավարտում է ու դեմ առնում պատի, որ չկա համապատասխան աշխատանք: Բնական է՝ նրանց մեծ մասը փնտրում է վարչական աշխատանք, բայց կան մարդիկ, որոնց համար առաջնայինը ֆինանսական կողմն է, նաև զգում են, որ արտադրություն զնայով կա պոտենցիալ, որ իրենք կարող են դառնալ լավ կադրեր և իրենց գիտելիքներն օգտագործել հետագայում, դրան գումարվում է հատկապես բաց հանքի հեռանկարը, որտեղ արդեն փորձառուները կարող են ղեկավար պաշտոններ զբաղեցնել:

Նաև ասեմ, որ մեր աշխատակազմի մոտ 20 տոկոսն է ընդգրկված վարչատնտեսական աշխատանքներ

ում, մնացածը՝ բանվորական, սա նորմալ հարաբերակցություն է համարվում:

Ձեր ընկերությունում անընդհատ աշխատանքային եւ արտադրական գործընթացների արդիականացում է ընթանում, դա նաեւ նեղ մասնագետների պահանջարկ է ենթադրում: Ինչպե՞ս եք այդ մասնագետների հարցը լուծում:

Հիմնական կադրերը մենք ունենք, բայց որոշ մասնագետների հարցն այդպես էլ չի լուծվում: Ինչ այստեղ աշխատում են, ընկերությունը մարկշեյթերներ, երկրաբաններ է փնտրում... Ու այդպես էլ չենք կարողանում գտնել անհրաժեշտ կադրեր: Կապանում չենք գտնում,


տանի օրենսդրությամբ, աշխատանքի փորձ կունենան իրենց ոլորտում, տնօրինությունը հակված է ընդունել նրանց ցանկացած բաժնում, եւ պարոն Ֆալետտան էլ ցանկանում է ինչքան հնարավոր է տեղացի կադրեր ընդունել:

Դրսից քանի՞ աշխատող ունեք հիմա:

Օտարերկրացիները 17 հոգի են, իսկ երեւանից՝ 5-6 հոգի: Ժամանակին՝ 2008-ին, դրսից մոտ 50 հոգի կար:

Ի՞նչ վերապատրաստում, ուսուցում է անցնում կոմբինատում մեր աշխատանքի ընդունվածը:

Հատուկ բաժին ունենք, որը զբաղվում է թե՛ մեր կադրերի ուսուց-



դրսից ցանկացողներն էլ, բնականաբար, բարձր աշխատավարձ են պահանջում: Գիտեք, որ արտասահմանցիներն այստեղ աշխատում են աշխատանքային կոնկրետ ժամկետային պայմանագրով, ու տնօրենը հակված չէ այն մտքին, որ մասնագետներն անպայման պիտի դրսից լինեն. եթե հիմն Կապանում գտնվեն մարդիկ, որոնք կարող են ղեկավարել կոնկրետ երկրաբանական ու մարկշեյթերական բաժինները, գրկաբաց կընդունենք:

Ասեմ նաև ղեկավար կադրեր ընտրելու սկզբունքը. տնօրինության համար կարևոր է գտնել այնպիսի մարդկանց, որոնք կկարողանան իրենց աշխատանքում համատեղել հայաստանյան ու արևմտյան չափանիշները, լինեն եւ դրսի, եւ մեր օրենքներն իմացող մարդիկ: Եվ եթե կլինեն կադրեր, որոնք կունենան աշխատանքի արտասահմանյան փորձ, ծանոթ կլինեն համաշխարհային ստանդարտներին, նաեւ շայտա-

մամբ, թե՛ հների վերապատրաստմամբ: Եվ կան հստակ մշակված ծրագրեր բոլոր մասնագիտությունների համար, ըստ որոնց աշխատանքի ընդունվողը թե՛ տեսական, թե՛ գործնական ուսուցում է անցնում: Եվ կան մասնագիտություններ, որոնց համար աշխատողը նաեւ տարվա մեջ է ընթացիկ վերապատրաստում անցնում:

Դուք նշեցիք, որ ընկերությունում շատ են կարելու միջազգային չափանիշները, արտասահմանյան աշխատանքի փորձը: Ընկերությունն ինքն իր աշխատողներին ուղարկում է դուրս վերապատրաստման, առաջադեմ կազմակերպությունների փորձն ուսումնասիրելու համար:

«Dandee Precious Metals»-ը աշխարհում մի քանի տեղ է հանքեր շահագործում, դրանցից մեկն էլ Բուլղարիայում Չելոպեչի հանքն է, եւ նրանց հետ ենք այժմ համագործակցում, մեր կադրերին այն-

տեղ վերապատրաստման ուղարկում: Նրանք ավելի շուտ են միացել «Դանդի»-ին եւ ավելի վաղ յուրացրել առաջադրվող պահանջները, աշխատում են դրանց համապատասխան՝ միեւնոյն ժամանակ չանտեսելով տեղական օրենքները:

Բացի դրանից, Երեւանում բանակցում են մի քանի կազմակերպությունների հետ, կընտրենք նրանցից մեկը, որի հետ կհամագործակցենք, եւ արդեն տեղում՝ Կապանում, նրանք կվերապատրաստեն մեր կադրերին:

Դեռ չա՞տ ճանապարհ ունեք անցնելու, որպեսզի հասնեք Ձեր նշած միջազգային չափանիշներին:

Աշխարհում ընդունված չափանիշներին արդեն իսկ հասել ենք: Իհարկե, ընկերություն չկա, որ թերթյուն չունենա: Բայց տարբեր մասնավոր եւ պետական ձեռնարկությունների հետ ենք առնչվում, թող իբրեւ գլուխ գովել չընկալվի, գոնե Սյունիքում չգիտեմ մեկ այլ մասն ընկերություն, որն ունենա աշխատանքային այս պայմանները, որտեղ լինի դրանք բարելավելու այն ձգտումը, որն ունեն մեր տնօրենն ու սեփականատերերը: Աշխատավարձերի առումով առավել շատ կարելու ենք բանվորական անձնակազմինը. միզուցե որոշ ընկերություններում միջին աշխատավարձը բարձր է երեւում ի հաշիվ ղեկավարների շատ բարձր աշխատավարձի, մեզ մոտ գնահատվում է հանքի բանվորների աշխատանքը:

Ասեմ նաեւ, որ ընկերությունը, բացի աշխատավարձից, աշխատակիցներին նաեւ օգնություններ է տրամադրում: Դրանք տրվում են ուսանող զավակների ուսման վարձի, առողջական խնդիրների լուծման եւ այլ մասնատիպ կարիքների համար: Իհարկե, առաջնահերթ տրվում են մեր աշխատողներին, բայց հնարավորության դեպքում՝ նաեւ նրանց ընտանիքի անդամներին: Օրինակ, վերջին երեք ամսում մեզ օգնությունների բյուջեն անցել է չորս միլիոն դրամից: Հիշեցնեմ, որ դա կապ չունի արհմիության օգնությունների հետ: Աշխատակցի կորստի դեպքում էլ միանվագ օգնություն է տրամադրվում, կա նաեւ խրախուսանքների մեխանիզմ, պարգևատրման համակարգ բոլոր բաժինների համար:

Տիկին Ջալալյան, «Դանդի»-ի «Դիմո»-ի սեփականատեր դառնալուց հետո ի՞նչ տեղաշարժ է գրանցել աշխատակիցների թվաքանակում:

Ասեմ տարեկան միջին թվերը. 2006-ին, երբ եկավ մեր սեփականատերը, 970 աշխատող կար այստեղ, 2007-ին թիվը բավականին մեծացավ, կար 1278 հոգի: Բացվեց երկրաբանական հետախուզության ծառայությունը, որը նպաստեց աշխատատեղերի ավելացմանը, թիվը հասավ 1492-ի: Երբ սկսվեց տնտեսական ճգնաժամը, եւ այն փակվեց, թիվը նորից իջավ, չնայած հետախուզությունից որոշ երկրաբաններ հիմա էլ աշխատում են: Այնպես որ, ստացվում է, աշխատատեղերի քանակը ոչ միայն պահպանվել է, այլև աճել:

Անցյալական ու անհիմն կրճատումներ չեն լինում, դա անհեթեթություն կլիներ հենց ղեկավարի կողմից, որովհետև եթե պետքական կադրին ազատում ես, ու աշխատանքը չի կատարվում, դրանից չես շահում:

Ո՞ր կառույցն է այստեղ պաշտպանում աշխատողի իրավունքները:

Ընկերությունն ունի արհեստակցական կազմակերպություն, գործում է իրավաբանական բաժինը, բայց հիմնականում խնդիրների դեպքում աշխատողն առնչվում է մեր բաժնին: Այս երեք կառույցներս էլ մեր լիազորությունների սահմանում նպաստում ենք իրավունքների

պաշտպանությանը: Օրինակ, եթե ինչ-որ մեկին պիտի նկատողություն հայտարարեն, մինչև մարդկային ռեսուրսների բաժինն իր անցկացրած ուսումնասիրության հիման վրա չունենա փաստեր, տնօրենը հրաման չի արձակում:

Աշխատանքի ընդունվելու համար քանի՞ դիմում կա հիմա ձեր բաժնում:

Այժմ մոտ 70 հոգու դիմում կա, հիմա հիմնականում երկրաբանական հետախուզության համար ենք դրանք հավաքում:

Ինչպե՞ս եք վարվում կենսաթոշակային տարիքը լրացած աշխատողների հետ:

Մինչև 2009թ. փետրվարը, ըստ օրենքի, նրանք պետք է ազատվեին աշխատանքից: Հիմա օրենքի այդ դրույթը վերացվել է, եւ իրավունք չունենք թոշակառուին ազատել աշխատանքից, եթե, իհարկե, նա առողջական խնդիրներ չունի: Ասեմ, որ ամեն տարի մեր աշխատողները պարտադիր բժշկական զննություն են անցնում: Մարդիկ կան, որ շնորհակալություն են հայտնել, որովհետև լուրջ խնդիրներ են ունեցել, որոնց մասին չգիտեին: Եթե հնարավորություն ենք ունենում, նրանց տեղավորում ենք ունեցում, հրաժարվում ենք այլ աշխատանքի՝ իրենց համապատասխան որակավորմամբ: Եթե ոչ, սահմանված ձեռով ծանուցում ենք ազատման մասին:

Ի՞նչ ծրագրեր ունի առաջիկայում մարդկային ռեսուրսների բաժինը:

Առաջիններից մեկը, որ ուզում են առաջիկայում կիրառել եւ որը մեզ համար նորություն կլինի, «վերջին հարցազրույց» ասվածի ներդրումն է ընկերությունում: Այսինքն՝ կադրի հետ աշխատանքից ազատվելու դեպքում վերջին հարցազրույց կանցկացվի: Դա մեզ պետք է հատկապես այն դեպքերի համար, երբ աշխատողն ինքն է ազատման համար դիմում գրում: Ցանկալի է իմանալ հեռանալու պատճառը, միզուցե սխալում ունենք, որոնք կարող ենք շտկել և հետագայում խուսափել մնա՞ն ազատումներից: Դա մեզ տեղեկատվություն կտա նաեւ այն մասին, թե ինչն է մարդուն զայրթալում մեկ այլ աշխատանքի տեղափոխվելիս: Ի վերջո, համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ վերջին հարցազրույցը հաճախ թույլ է տալիս պահել արժեքավոր կադրին: Առայժմ այն կկիրառենք վարչական աշխատողների համար՝ աստիճանաբար մերոնցով նաեւ հանքի աշխատողների ազատման պարագայում:

Միջինը անսական քանի՞ մարդ է ազատվում աշխատանքից եւ ի՞նչ պատճառներով:

Ինչպես նշեցի, ազատման պատճառներից մեկը առողջականն է: Ոչ շատ հաճախ, բայց երբեմն կրճատումներ էլ են լինում: Պատճառներից մեկն էլ հանրապետությունից դուրս գալն է. հիմնականում, ընդ որում այս միտումը վերջերս զարգացում է: Ասեմ, որ մեզ մոտ բոլոր բաժիններում ամեն հեթափոխից առաջ պարտադիր ավիոհոլային թեստ է անցկացվում, եւ ազատումներ լինում են նաեւ ոչ սթափ վիճակում աշխատանքի ներկայանալու դեպքում: Ցավալի է, բայց մնա՞ն ամիս չկա, որ այդ պատճառով ազատում չլինի... Ազատման պատճառ կարող է դառնալ նաեւ ոչ ճիշտ պահվածքը, աշխատանքային պարտականությունները չկատարելը: Եվ իհարկե, կան մարդիկ, որոնք այլ աշխատանքի են տեղափոխվում: Միջինը ամսական 10-20 մարդ է ազատվում: Ցավոք, երբեմն լավ կադրեր էլ ենք կորցնում...

ԱՄՍԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Անվտանգ միջավայր աշխատողների համար

Նպատակը մեկն է՝ յուրաքանչյուր ոք պետք է աշխատանքի գերկայանա՝ հավատալով, որ ապահով տուն կվերադառնա



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

ԲԻՆ ՀԱՐԿԻ

անվտանգության հարցերով խորհրդատու

«Դինո գոլդ մայնինգ քամին» ՓԲԸ-ի բուժապասարկման եւ անվտանգության բաժինը կրում է համընդհանուր պատասխանատվություն՝ մշակելու, վերահսկելու եւ իրագործելու անվտանգության ապահովմանը միտված աշխատանքները, որի նպատակն է պահպանել «Դինո գոլդ» անվտանգության անհրաժեշտ ցուցանիշը: Այդուհանդերձ աշխատողների ընթացիկ բուժապասարկման եւ անվտանգության հիմնական պատասխանատվությունը ընկնում է յուրաքանչյուր անհատի վրա նույնպես:

Բուժապասարկման եւ անվտանգության բաժնի ղեկավարը Հայկ Ստեփանյանն է, իսկ ես՝ տողերի հեղինակս, անվտանգության խորհրդատուն եմ:

Կրթությունը, վերապատրաս-


տումը եւ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման ունակությունն անվտանգ գործունեության հիմքերն են: «Դինո գոլդ» կազմակերպում է անվտանգության դասընթացներ բոլոր աշխատողների, այդ թվում նաեւ արագ արձագանքման ջոկատի համար: Դասընթացների նպատակն է հավաստիանալ, որ բոլոր աշխատողների համար ապահովված է անվտանգ միջավայր:

Լեռնափրկարարների ջոկատի առաջնորդի եւ անվտանգության բաժնի ղեկավարի համագործակցությամբ, շարունակական վերապատրաստումների շնորհիվ լեռնափրկարարների ջոկատը վերջերս ստացել է հավաստագիր՝ դառնալով Հայաստանում առաջին հավատարմագրված լեռնափրկարարների ջոկատը:

Բաժնի ղեկավարը կարգավորում

Անվտանգության բաժնում ներգրավված են՝

- անվտանգության չափորոշիչների համապատասխանեցման մեկ գործակալ,
- անվտանգության երկու ինժեներ,
- լեռնափրկարարների քսանմեկ հոգանոց ջոկատ,
- ութ բուժքույր,
- վերապատրաստման երեք մասնագետ,
- անվտանգության ութ քարտուղար:



է բաժնի ամենօրյա աշխատանքները, ինչպես նաեւ պատրաստում օրենսդրական ու կանոնադրական գեկույցները, իսկ անվտանգության բաժնի խորհրդատուն համագործակցում է ընկերության բաժնեմեթոդի հետ՝ անվտանգության հետ կապված բարեփոխումների կիրառման ու զարգացման ուղղությամբ, քանի որ ընկերությունը շարունակում է աճել եւ ընդարձակել իր միջազգային կապերը՝ որպես խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություն: Թերեւս ամենակարգապահ զարգացումն անվտանգության բաժնի

հաջորդ հերթափոխին վերադառնալ աշխատանքի, • ռիսկի կրճատման ռազմավարություններ, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս «ԴԳՄ» ՓԲԸ-ին համեմատել աշխարհի բարձրակարգ ձեռնարկությունների հետ: Աշխատաժամանակի կորստով պատահարների հաճախակիությունը կանոնավոր կերպով կիրառվում է որպես աշխարհի մասշտաբով համեմատական ցուցանիշ, բայց այն ունի որոշ սահմանափակումներ, քանզի աշխարհի ոչ բոլոր ընկերություններն

ունեն ռիսկի միտումնալի մակարդակները: Այդուհանդերձ, աշխատաժամանակի կորստով պատահարների հաճախակիությունը մեկից պակաս ցուցանիշը համընդհանուր ընդունված ցուցանիշ է աշխարհի հանքարդյունաբերական ընկերությունների շրջանում: «Դինո գոլդ մայնինգ քամին» հաջողությամբ վերահսկել է վնասվածքներ ստանալու հավանականությունը 2008-ից սկսած, որպեսզի պահպանի մեկից պակաս պատահարների միջին ցուցանիշը: «Դինո գոլդ» ներկայիս ցուցանիշն աշխատաժամանակի կորստով պատահարների հաճախակիությունն է համար 0.6-ից ցածր է:

Ռիսկի կրճատման ռազմավարությունները, որոնք ներկայացված են բիզնեսում, հնարավորություն են տալիս բոլոր հանքերին բացահայտելու իրենց ռիսկային յուրաքանչյուր գործընդ, ինչն ավելի արդյունավետ է, քան վերցնել բոլոր հանքերի միջին ցուցանիշը: Այս առումով յուրաքանչյուր հանքարդյունաբերական ընկերությունը հնարավորություն ունի ռիսկի կրճատման իր ռազմավարությունները համեմատել այլ ընկերությունների նույն ռազմավարությունների հետ: 2010 թվականին ըստ միջազգային զննահատուկների՝ «Դինո գոլդ մայնինգ քամին» ՓԲԸ-ի ռիսկի գնահատման արդյունքը նրան վերապահեց բարենպաստ դիրք, ինչն արձանագրեց առաջընթաց 2009-ի համեմատ: Աշխատանքի վերահսկողության պայմանները եւ աշխատատեղերի անվտանգության առաջնությունը շարունակական առաջարկներ է հավաստիանալու, որ բոլոր աշխատողների անվտանգությունը «Դինո գոլդում» ապահովված է: Բուժապասարկման եւ անվտանգության բաժինը կիսում է այդ պատասխանատվությունը բոլոր մյուս բաժինների հետ: Նպատակը մեկն է՝ յուրաքանչյուր ոք պետք է աշխատանքի գերկայանա՝ հավատալով, որ ապահով տուն կվերադառնա:

Ընկերությունում ստեղծվել է արագ արձագանքման լեռնափրկարար ջոկատ



Ուսումնական դասընթացի ավարտին

«ԴԳՄ քամինի» արագ արձագանքման լեռնափրկարար ջոկատը ստեղծվել է 2008թ. մարտի 1-ին: Ջոկատի անձնակազմն աշխատում է չորս հերթափոխով եւ ունի 22 լեռնափրկարար, որոնցից հինգն ունի տարբեր տարիների փորձ ու ղեկավարում է հերթափոխը: Լեռնափրկարարական ջոկատի անդամները բազմիցս ուսուցանված են, դասընթացներ, վերապատրաստումներ են անցել 33 փրկարար հասարակական ջոկատների, 33 արտակարգ իրավիճակների նախարարության, պետական կառույցների պրոֆեսիոնալ փրկարարների, նաեւ նախարարության ճգնաժամային կառավարման ակադեմիայի կողմից: Ջոկատը եւ ջոկատի բոլոր փրկարարներն արժանացել են բարձր գնահատականի եւ նրանց շնորհվել են փրկարարական գրքույկներ:

2010թ. մայիս ամսին 33 արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրեն գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը ջոկատին հանձնեց փրկարարական կազմավորման վկայական (N 001), որը հանրապետությունում առաջինն էր: Այսինքն՝ Հայաստանում սա առաջին օրինակն է, երբ մասնավոր ընկերությունը ստեղծում է արտոնագիր ունեցող մասնավոր փրկարարական կառույց: Վկայականը հնարավորություն է տալիս 33 ողջ տարածքում բազմակողմանիորեն աջակցել

պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ քաղաքացիներին:

Ջոկատի գործառնականությունն է կանխել հնարավոր վտանգները, եւ փրկարար աշխատանք կատարել գրանցված արտակարգ դեպքերի ժամանակ: Հերթափոխում ընդգրկված լեռնափրկարարները շրջում են բոլոր տեղամասերով, կատարում այն աշխատանքները, որոնք կարող են վտանգ ներկայացնել լեռնագործների համար: Իսկ որեւէ վթարի կամ արտակարգ դեպքի ժամանակ կարգավարը, ահազանգ ստանալով, անմիջապես տազանալ է հնչեցնում, ու համապատասխան վայր է մեկնում երկու մեքենա՝ մեկը նախատեսված է փրկարարների համար, մյուսը՝ բուժքույրերի: Այսպիսով՝ ջոկատը համագործակցում է ընկերության բուժապասարկման բաժնի հետ: Ջոկատը հազեցած է անհրաժեշտ կապի միջոցներով, տեխնիկայով, սարքավորումներով: Լեռնափրկարարների կյանքն ապահովագրված է եւ «ԴԳՄ» ընկերության կողմից, եւ իրենց անհատական նախաձեռնությամբ: Ջոկատի անդամներն ունեն ոչ միայն փրկարարական, այլեւ մարդու առաջին բուժօգնություն ցույց տալու հմտություններ, ինչը նրանց աշխատանքի մի բաղադրիչն է:

ԷԴՎԱՐ ՄԱՐՏԻՈՍՅԱՆ
«ԴԳՄ» ՓԲԸ արագ արձագանքման լեռնափրկարար ջոկատի ղեկավար



Ջոկատի անդամները ուսումնական վարժանքի ժամանակ



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հումքային բազան

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի պաշարները հաշվարկվել են հաստատվել են 1944թ., (протокол BK3 №3378 от 23.02.1944г.), 1953թ. (протокол BK3 №8991 от 27.05.1954г.) եւ 1977թ. (протокол ГК3 №7836 от 27.04.1977г.): Ըստ 1977թ. հաշվարկի՝ հաստատվել է 5 մլն 704 հազ.տ C1+ C2 պաշար կատեգորիայի բալանային եւ C1 կատեգորիայի 30.4 հազ.տ արտաբալանային պաշար, որտեղ հիմնական օգտակար բաղադրիչները, ըստ C1+C2 կատեգորիայի, կազմել են՝ ոսկի՝ 21577 կգ, պղինձ՝ 34.9 հազ.տ, ցինկ՝ 171.9 հազ.տ, կապար՝ 11.6 հազ.տ, արծաթ՝ 378.8 հազ.կգ:

Այնուհետեւ 1957-1997թթ. իրականացված մանրազննիչ երկրաբանահետախուզական աշխատանքների փուլում օպերատիվ հաշվարկով տեղի է ունեցել պաշարների աճ: Հանքավայրի վերագնահատման նպատակով 1997-1998թթ. կազմվել են հաստատվել է 38 հանքային մարմիններում ամփոփված C1+ C2 կարգի 13685.4 հազ.տ պաշարների հաշվարկի կոնդիցիոն չափորոշիչների տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունը: Սակայն այդ չափորոշիչներով հաշվարկված պաշարները պաշարների գործակալության կողմից չեն հաստատվել:

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործումը սկսվել է 1994թ.: Շահագործման սկզբնական փուլում արտադրողականությունը նախագծային տարեկան 300 հազ.տ փոխարեն կազմել է 30-50 հազ.տ: Նախագծային արտադրողականությանը հանքը հասել է 2006թ.:

2005թ. ապրիլի 7-ին «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ եւ Լիազոր մարմնի միջեւ կնքվել է թիվ 060 ընդերքօգտագործման լիցենզային պայմանագիրը, ըստ որի Հատուկ մասի պահանջի ընդերք օգտագործող պարտավորվել է սեփական միջոցների հաշվին իրականացնել հանքավայրի վերագնահատման աշխատանքներ: 2005թ. դրությամբ ըստ ընդերքօգտագործման ամենամյա №5-ՕՉՊՀ հաշվետվության՝ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հաշվեկշռում հաշվառված էր 14 մլն 361 հազ.տ պաշար, որտեղ՝ ոսկի՝ 37.17 տ, արծաթ՝ 727.15 տ, պղինձ՝ 86.9 հազ.տ, ցինկ՝ 351.9 հազ.տ, կապար՝ 22.28 հազ.տ:

«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ն,

հանդիսանալով օրինապահ ընդերքօգտագործող, հետապնդելով ընդերքը համակողմանի, ամբողջական եւ տնտեսապես շահավետ օգտագործելու ռազմավարական նպատակ, կատարել է գոյություն ունեցած եւ շահագործողական հետախուզության արդյունքում ձեռք բերված երկրաբանական տեղեկատվության վերլուծություն, հետախուզական եւ շահագործողական աշխատանքների արդյունքների համադրում:

Մշակվել է ընդերքօգտագործման գործընթացի բնապահպանական, աշխատանքի տեխնիկական անվտանգության, աշխատանքի պաշտպանության, որակի կառավարման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումների ռազմավարությունը եւ մարտավարությունը: Այնուհետեւ սկսվել են հանքավայրի վերագնահատման աշխատանքները:

Հանքավայրի պաշարների հաշվարկի կոնդիցիոն չափորոշիչների տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունը մշակվել է «Գեոէկոնոմիկա» ՊԲԸ-ի կողմից պայմանագրային հիմունքներով:

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրում հայտնաբերված է ավելի քան 80 հանքային մարմին, որոնք մորֆոլոգիական տեսակետից իրենցից ներկայացնում են երակներ եւ երակային զոնաներ: Առանձնացվել է հանքավայրի յուրացման երեք ետաս, տեխնիկատնտեսական հաշվարկներով հիմնավորվել է հանքավայրի բացման եղանակը, տարբեր հաշվարկային եւ շահագործման բլոկներում օպտիմալ մշակման համակարգի ընտրության համար որոշվել են «կրիտիկական հզորությունը» եւ «կրիտիկական պարունակությունը»: Շահագործման կոնդիցիոն չափորոշիչները, պայմանական ոսկու միմիմալ արդյունաբերական, եզրային եւ եզրագծման պարունակությունները որոշվել են դիֆերենցված՝ հաշվի առնելով հաշվարկային բլոկների ըստ էտապների տարածական յուրացման ծախսերի աճը:

Հանքավայրի պաշարների հաշվարկի կոնդիցիոն չափորոշիչների տեխնիկատնտեսական հիմնավորման հաշվետվությունը հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանձնարարների գործակալության

պետական ընդերքբազմամետաղային փորձաքննության հանձնաժողովի 2008թ. մայիսի 12-ի լիազումար նիստում թիվ 175 (319) արձանագրությամբ:

Հաստատված չափորոշիչներով կատարվել է պաշարների հաշվարկ եւ ՀՀ ենթհատիկայի եւ բնական պաշարների նախարարության օգտակար հանձնարարության գործակալության պետական ընդերքբազմամետաղային փորձաքննության հանձնաժողովի 2009թ. հունիսի 29-ի լիազումար նիստում թիվ 220 արձանագրությամբ հաստատվել են հետեւյալ C1+C2 կարգի պաշարները՝ հանքաքար՝ 17859.0 հազ.տ, որում՝ պղինձ՝ 118.66 հազ.տ, ցինկ՝ 487.84 հազ.տ, կապար՝ 28.46 հազ.տ, ոսկի՝ 50282.19 կգ, արծաթ՝ 937.1 տ:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը եւ միջազգային շուկայում մետաղների գների կտրուկ աճն ընկերությանը ստիպեցին փոխել տնտեսվարման ռազմավարությունը: Հումքային բազան համալրելու եւ ընդերքը ռացիոնալ օգտագործելու համար քննարկվում են հանքավայրը մորֆոլոգիական տեսակետից որպես միներալիզացված զոնաներ գնահատելու եւ մշակման եղանակի փոփոխության տարբերակներ: Արդյունքում ակնկալվում է պաշարների աճ:

Հումքային բազան համալրելու մյուս տարբերակն ընկերությունը տեսնում է Կապանի հանքային դաշտում երկրաբանահետախուզական աշխատանքների շնորհիվ նոր տնտեսապես ձեռնտու հանքակուտակումների հայտնաբերման մեջ:

«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ ընկերությունը ձեռք է բերել Կապանի հանքային դաշտում 366 քառ.կմ վրա երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման թույլտվություն: Իրականացվել են լայնածավալ երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնք ֆինանսական ճգնաժամի պարտաճանաչված ժամանակավորապես դադարեցվել էին: Սակայն ուսումնասիրության ժամկետը երկարացվել է մինչ 2012թ., եւ երկրաբանահետախուզական աշխատանքները մոտ ապագայում կվերսկսվեն:

ՄԻՍՈՆ ՆԱԿԱՍԱՐՈՅԱՆ
Շահումյանի հանքի նախագծման եւ պլանավորման ճարտարագետ

ՆԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ Պատմում են գործընկերները ՎԱՉԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Աճանահի գյուղապետ
«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունն Աճանահի գյուղի վարչական տարածքից 95.5 հեկտար է վարձակալել կառուցապատման եւ ընդերքօգտագործման նպատակով 25 տարի ժամկետով: Այս հանգամանքը երկու կողմերի միջեւ ոչ միայն համագործակցության հիմք հանդիսացավ: Չեռնարկությունը գործուն մասնակցություն է ունենում համայնքի առաջ ծառայած խնդիրների լուծմանը: 2006-2007թթ., երբ Աճանահի գյուղի գաղիֆիկացվել, դիմեցինք Կապանի կոմբինատին, որը 5 միլիոն դրամ հատկացրեց գործն ավարտին հասցնելու համար: Իսկ վերը նշված հողատարածության համար «Դինո գոլդ մայնինգ քամփնի»-ն տարեկան համայնքային բյուջե է փոխանցում 3.8 մլն դրամ: Բացի դրանից՝ ձեռնարկությունն օգնության ձեռք է մեկնում համայնքին՝ խոտհնձի ու բերքահավաքի օրերին՝ վառելիք հատկացնելով, նպաստում, որ գյուղի ճանապարհները լինեն բարեկարգ վիճակում, անհրաժեշտության դեպքում տրամադրում է տեխնիկա: Ինձ համար գրավիչն այն է, որ ինչ հարցով դիմում ենք կոմբինատի ղեկավարությանը, այն շատ օպերատիվորեն լուծվում է: Ճշմարիտն ասած կոմբինատի նախկին սեփականատիրոջ հետ որոշ տարածայնություններ էին ծագել այսօր արդեն վարձակալված հողատարածությունների առնչությամբ: Ներկա սեփականատերն օրինական դաշտ տեղափոխեց այդ հարաբերությունները:



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Կուզեի նշել, որ մեր համայնքից մարդիկ են աշխատում կոմբինատում, ինչը գյուղաբնակի ընտանեկան հոգսերը թեթևացնելու լուրջ գործոն է: Այս ամենի համար երախտապարտ ենք կոմբինատի ղեկավարությանը, լիախոյս ենք, որ համայնքին նեցուկ լինելու նրա որդեգրած քաղաքականությունը նոր դրսևորումներ կունենան:

ՄՈՎՍԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Վայքլ» ՍՊ

ընկերության տնօրեն

«Վայքլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության ներկայիս սեփականատիրոջ ու ղեկավարության մոտ վստահելի գործընկերոջ համարում ունի: Մեր ձեռնարկության հիմնական արտադրանքը՝ կոշտավոր կիրը, լեռնահանքային արդյունաբերության մեջ մեծ պահանջարկ է վայելում, եւ կարելի է բաղադրիչ է հանքաքարի հարստացման գործընթացում: Կապանի կոմբինատի հետ մեր համագործակցությունը յոթ տարվա պատմություն ունի: Արտադրության կազմակերպման միջազգային գործակալերից դավանող ձեռնարկությունները մշտապես այլընտրանք են փնտրում, բայց մեր համագործակցությունն այնպիսի ամուր հիմքերի վրա է, որ կոմբինատի սեփականատերը կիր մատակարարելու առումով ցանկություն չունի մեզնից բացի մի այլ գործընկեր գտնել: Ընդհանրապես կիրն իր որակական հատկություններն արագ կորցնելու հատկություն ունի, բայց երկուստեք այնպիսի համաձայնության ենք եկել, որ մեզ համար արտադրելը եւ մատակարարելը դյուրին լինի, իսկ նրանց համար պահպանելն ու օգտագործելը՝ հարմար: Կոմբինատի պահանջարկը բավարարելու համար տարեկան արտադրում ենք 3000 տոննա կիր, եւ կոմբինատի արտադրական կարողությունների ընդլայնմանը զուգահեռ այդ թիվն աճում է: Միայն կոմբինատին կիր մատակարարելու գործում ընդգրկված է մոտ 70 մարդ, որոնց միջին ամսական աշխատավարձն անցնում է 100 հազար դրամից: «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ընկերությունը որդեգրել է արտադրություն կազմակերպելու նոր գործընկերային, եւ, չնայած քաղաքական տեխնիկային առնչվող որոշ հարցեր սովորում ենք նրանից:



Լուսանկարը՝ Ա. Ավագյանի

Որպես գործընկեր տեսնում են «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության արտադրական ծավալների աճի դինամիկան, ձեռնարկության տարբեր օղակներում իրականացվող տեխնիկական վերազինումը: Այդ ամենը վկայությունն է այն բանի, որ մեր համագործակցությունը լայն հեռանկարներ ունի:

ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Սոցիալական ծրագրերը՝ ընկերության գործունեության գերակա ուղղությունների թվում



ՆՈՐԱՅՐ ԱՐԱՅԱՆ

«Դիմո ՎՄՔ» ՓԲԸ կառավարության և հանրության հետ կապերի բաժնի պատասխանատու:

«Դանդի փրօշու մեթոդ»-ի կողմից «Դիմո գոլդ մայնիգ քամփնի» ձեռք բերումից հետո ընկերությունը, ի թիվս այլ ծրագրերի, սկսեց իրականացնել կայուն զարգացման ծրագրեր, որոնք ունենին սոցիալական ուղղվածություն:

Սկսած 2006թ.-ից ընկերությունը տարեկան շուրջ 300-400 հազար ԱՄՆ դոլար է ուղղում սոցիալական և կայուն զարգացման ծրագրերին: Ընկերությունը հովանավորել է բազմաթիվ և բազմապիսի սոցիալական ծրագրեր, ինչպիսիք են՝ համայնքային նշանակության բազմաթիվ միջոցառումների ֆինանսավորումը, մանկապարտեզներին և դպրոցներին տրամադրվող օգնությունները, քատերական փառատոների կազմակերպումը, մանկական խաղահրապարակների կառուցումը, Ողջի գետի հունի մաքրումը և այլն: Առանձնակի ուշադրություն է դարձվել և դարձվում անապահով մարդկանց սոցիալական խնդիրների լուծմանը: Ընկերությունը տարիներ շարունակ համագործակցում է Կարմիր խաչի, ինչպես նաև հաշմանդամների խնդիրներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Պատշաճ ուշադրություն է դարձվում մարդկանց առողջության հետ կապված

2010թ. հուլիսի 5-ից 16-ը Կապանի մշակույթի կենտրոնը կազմակերպել էր մանկական ցերեկային ճամբար (ճամբարի պեպ) Արմենակ Չայրապետյան), որի գլխավոր հովանավորը «Դիմո ՎՄՔ» ՓԲԸ-ն էր: 5-13 տարեկան մոտ 300 երեխայի հանգստի արդյունավետ կազմակերպմամբ զբաղվել է 45 հոգանոց աշխատակազմը: Հիմնականում ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կազմակերպված ճամբարի գործունեությունը բարձր են գնահատում մասնագետները:



խնդիրների լուծմանը: Ամենաշարունակական և ծավալուն ծրագրերից են ընկերության աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների բուժման հետ կապված ֆինանսական օժանդակությունները: Այդ նպատակով տարեկան շուրջ 20 մլն դրամ է հատկացվում: Տեսադաշտից դուրս չի մնացել սպորտը: Իրականացվել են դրա զարգացման ուղղված մի շարք ծրագրեր՝ ապահովելով տեղացի մարզիկների մասնակցությունը միջազգային մրցաշարերին: Ծրագրերը վերաբերել են սպորտի այնպիսի բնագավառների, ինչպիսիք են քիք-բոքսինգը, սանդա-ուշուն, շախմատը: Հաշվի առնելով բռնցքամարտի աճող մասսայականությունը և այն, որ Կապան քաղաքում չկա բռնցքամարտի ակումբ, այս տարի ընկերությունն օժանդակել է բռնցքամարտի ակումբի հիմնադրմանը: Հույս ունենք, որ ընթացիկ տարում կվերականգնենք նաև ֆուտբոլային մրցաշարի կազմակերպման ավանդույթը: 2010թ. ծրագրերից առավել ուշագրավ են Կապանի հիվանդանոցում իրականացվող վերանորոգման աշխատանքները, որոնց աջակցելու համար ընկերությունը 20 մլն դրամ

է տրամադրել: Ընկերությունն առաջիններից էր, որ արձագանքեց այդ նախաձեռնությանը: Նշված ծրագիրը ընկերության համար կարելի է ոչ միայն նրա համայնքային նշանակության առումով, այլև այն պատճառով, որ դա Կապանի հասարակությանը և գործարար աշխարհին մեկ գաղափարի շուրջ համախմբող ծրագիր է: Ընկերության ղեկավարությունն այդպես է պատկերացնում սոցիալական ոլորտի իր անելիքները: Հետագայում այդ կարգի աշխատանքները շարունակելով հանդերձ կկարելուրվի համաձայնքը, որ Կապանի զարգացմանն ու գործերի բարելավմանը միտված ծրագրերին մասնակցեն համայնքի առավել շատ անդամներ: Ուրեմն և՛ ուշադրության արժանի են հատկապես այն ծրագրերը, որոնք առավել շատ շահառուներ ունեն: 2010 թվականին կատարված և կատարվող աշխատանքներում ուշագրավ են երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված և ամառային շրջանում մոտ 300 երեխաների հանգստի կազմակերպման ծրագրերը:



Բեմահարթակում փոքրիկ գեղեցիկ-գեղեցկուհիներն էին

Օրերս Կապանի մշակույթի կենտրոնի բեմահարթակում անցկացված «Միսս և Միստր Կապան-2010» գեղեցկության, նրբագեղության, ներդաշնակության մրցույթ-փառատոնը հովանավորել էր «Դիմո գոլդ մայնիգ քամփնի» ՓԲԸ-ն: Չորս անգամ Քաջարանում և Կապանում անցկացվել են նման փառատոններ, իսկ ամեն ինչ սկսեց նրանից, որ հինգ տարի առաջ՝ 2006թ. գարնանը, Սյունիքի մարզի «Միսս և Միստր» կազմակերպության նախագահ Նոնա Գալստյանը, իր շուրջ համախմբելով շնորհալի մանուկների, անցկացրեց նախադեպ չունեցող այդ միջոցառումը՝ նաև գեղեցիկի և բարու դասեր տալով փոքրիկներին: Մինչ փառատոնը սկսելը, միջոցառման մասնակիցներին ողջունեցին Կապանի և Քաջարանի հոգեւոր հովիվ Գալուստ վարդապետ Դարբինյանը, փառատոնի հանձնախմբի անդամ, «Դիմո գոլդ մայնիգ քամփնի» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Ֆարիդա Ֆալետտան, «Միսս և Միստր աշխարհ» միջազգային փառատոնի կազմակերպիչի նախագահ Աշոտ Խաչատրյանը: Իսկ մասնակիցները տարիքային երկու խմբերում (3-6, 7-10) իրենց կարողություն-

ները դրսևորեցին երեք փուլերում. նրանք նախ՝ մարմնավորեցին հեքիաթների սիրելի հերոսներին, հանդես եկան ազատ և ոչթմիկ պարերով, այնուհետև՝ ներկայացրին դասական ոճը: Եվ ամեն անգամ հանդիսականը սրտաբուխ ծափերով վարձատրում էր նրանց անմիջական կատարումները: Հանձնվեցին ինչպես գլխավոր, այնպես էլ տարբեր անվանակարգերում սահմանված մրցանակներ: Հանձնաժողովի նախագահ, հանրապետության ժողովրդական նկարիչ, քանդակագործ Լեւոն Թոքմաջյանը տպավորված էր փառատոնի բարձր կազմակերպվածությամբ և համոզմունք հայտնեց, որ այն կրառնա մի գեղեցիկ հուշ և մասնակիցներին կուղեկցի ողջ կյանքի ընթացքում: Ավելացնենք, որ Նոնա Գալստյանի ղեկավարած փառատոն-մրցույթների՝ մարզը ներկայացնող տարբեր տարիքի երեխաները մասնակցել են հանրապետական մրցույթների և եզրափակիչ «Գալա» համերգների՝ շահելով «Միսս Հայաստան», «Միստր Հայաստան», ինչպես նաև «Վիցե Միսս Հայաստան» մրցանակները:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



ԱՐՅՄԻՈՒԹՅՈՒՆ

Կոմբինատի ղեկավարության հետ գործընկերային նորմալ հարաբերություններ են հաստատվել

Ապրիլի 30-ին տեղի է ունեցել կոմբինատի արհեստակցական կազմակերպության կոնֆերանսը, որի ժամանակ կազմակերպության նախագահ է ընտրվել **ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**: Մինչ այդ աշխատել է հորատային շինարարության աշխատանքների տեղամասի պետ, հետո՝ հերթափոխի վարպետ, այժմ էլ արդեն ղեկավարում է Շահումյանի հանքի հորատային շինարարության աշխատանքները: Ընդ որում՝ արհմիութենայի պարտականությունը համապետելով է լեռնային ճարտարագետի մասնագիտության հետ՝ մտածելով, որ այդպես ավելի լավ կգա ձեռնարկության մարդկանց հոգսերն ու կարիքները: Այն համոզմունքը ունի, որ եթե մարդ փոքրիշատե գերծ է առօրյա հոգսերից, կենցաղային պրոբլեմներից, լիովին է փրվում արտադրական գործունեությանը:



Լուսավորող՝ Ա. Ավագյանի

մար կան իրավական հիմքեր: Ի՞նչը դրոշմ Արսեն Հայրապետյանին ստանձնելու կազմակերպության ղեկը: «Վերականգնելու կոմբինատի արհեստակցական կազմակերպության երբեմնի վարկը, կոմբինատի արհեստակցական կազմակերպությունը տարիներ առաջ լուրջ կառույց է եղել, որ շատ բան է արել ձեռնարկության բանվոր-ծառայողների շահերի պաշտպանության գործում, - ասում է Ա. Հայրապետյանը, - չէի ասի, թե լավ ժամանակ էր ստացել, մինչև ընտրվելս ձեռնարկության 200-250 աշխատող, սեփական դիմումի համաձայն, դուրս էր եկել արհմիությունից, ստույգ չեմ կարող նշել պատճառը, իմ ընտրվելուց հետո մոտ 150 մարդ վերականգնվեց արհմիության մեջ: Մեկ ամսվա մեջ կազմակերպության բյուջեն ավելացել է 250 հազար դրամով»: Ա. Հայրապետյանը ներկայացրեց կազմակերպության ֆինանսական խոհանոցը. կազմակերպության անդամներից հավաքվում էր 1.2 մլն դրամ ամբողջով: Գործող պայմանագրով 20 տոկոսը փոխանցվում էր ճյուղային արհմիության հանրապետական բյուջե, մի մասը վճարվում էր որպես աշխատավարձ (արհմիութենային էր հաշվապահին), արդյունքում մնում էր 400 հազար դրամ, որով հնարավոր էր սոցիալական ուղղվածության երկու խնդիրներ լուծել:

բային հարաբերությունները: Նման պայմանագիր մեկուկես տարի առաջ գոյություն է ունեցել: Արհմիութենային նախագահից նախկին առաջ հետաքրքրվեցինք, թե այժմ կոլեկտիվ պայմանագիր կնքվի: Դարձվեց, որ մշակվել է կոլեկտիվ պայմանագիր և ներկայացվել ձեռնարկության տնօրեն Ռոբերտ Ֆալետային: Ըստ մեր գրուցակցի՝ նման պայմանագիր գործատուի և արհմիութենայի փոխհարաբերությունները տեղափոխում է իրավական դաշտ, այն է՝ եթե գործատուն փորձի ինչ-որ տեղ ոտնահարել աշխատողի շահերը կամ չկատարել իր պարտականությունները, ապա արհմիությունը պարտավոր է համարժեք գործառույթներ իրականացնել, ինչի հա-

Ընտրվելուց հետո՝ կազմակերպության հենց առաջին նիստում, արհմիութենայի նախագահը փոփոխություններ է կատարել նշված աշխատավարձերի չափի մեջ, փոխվել են նաև տարբեր արտադրամասերի արհմիութենայի նախագահները: Ըստ նրա՝ փորձում է հնարավորինս արհեստակցական կազմակերպությունը ծառայեցնել լեռնագործների շահերին, ինչի վկայությունն է այն, որ ձեռնարկության տարբեր արտադրամասերի չորս լեռնագործ այս տարի արդեն սահմանոր բուժում են ստացել Ջերմուկում: Իսկ ընդհանրապես արհմիութենային էր ամբողջական և նյութական խնդիրներով: «Արհմիության դերը դրամական օգնություն ցույց տալը չէ միայն, բայց երբ մարդ դիմում է վիրահատվելու հարցով, ի՞նչ կարող են անել», - ասում է նախագահը՝ նաև նշելով, որ մարդկանց հոգեբանությունը փոխելու խնդիր կա: Երբեմն հանքափորը կարգապահական խախտում է թույլ տալիս և դիմում արհմիությանը, որ վերջինս իր անօրինական շահերը պաշտպանի: «Այսօր մենք հանդիպեցինք հորատողներին և քննարկեցինք այն հարցը, թե ինչու են սխալ հորատանցքեր բացվել, որի պատճառով ընկել է հորատային շինարարության 40-50 հոգուց ոչ ոք չկարողացավ հստակ պատասխանել հարցին: Բացի դրանից՝

որոշ մարդիկ թյուր պատկերացում ունեն իրենց պարտականությունների մասին. նախ՝ պայմանագիր են ստորագրում, որ 100 հազար դրամ աշխատավարձ պիտի ստանան, այնուհետև՝ սկսում գանգատվել, թե իրենց չարչարանքը չի համապատասխանում ստացած աշխատավարձին: Այստեղից էլ ծայր են առնում ավելորդ խտակցությունները»: Ձեռնարկության գործունեությունը վերջին մի քանի տարիներին ցնցվել է գործադուլների ավելանալուց, իսկ վերջինը տեղի է ունեցել այս տարվա հունվարի 17-ին, երբ Շահումյանի հանքի աշխատակիցները հրաժարվել էին աշխատանքի դուրս գալ՝ պահանջելով բարձրացնել աշխատավարձերը: «Չնարավոր է սոցիալական նոր պայթյուն՝ գործադուլների տեսքով», - հարցին մեր գրուցակիցը բացասական պատասխան տվեց՝ իր ասածը հիմնավորելով նրանով, որ իրավիճակը կոմբինատում միանգամայն կայուն է: Բայց նաև հավելելով, որ ինչ-որ սպասումներ էլ կան, մարդիկ հույս են փայփայում, որ աշխատավարձերի բարձրացում կլինի: Բանվորների աշխատայանքների բարելավման գործում ի՞նչ հրատապ խնդիրներ կան: Այսօր հանքում հզոր օդափոխիչներ են տեղադրվում, բայց օդափոխության խնդիրը միշտ պիտի լինի կոմբինատի տնօրինության տեսադաշտում, քանի որ ինչքան խորանում են ընդերքի մեջ, այնքան օդ մատակարարելու ավելի շատ կարիք է զգացվում: Մեր գրուցի ավարտին Արսեն Հայրապետյանը հայտնեց, որ կոմբինատի ղեկավարության հետ գործընկերային հարաբերություններ են հաստատվել, ինչն արհեստակցական կազմակերպության առջև ծառայած խնդիրների լուծման լուրջ նախարարյա է:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

ՀԱՅՄԱՅ ԱՆՑՍՈ ՏԱՆԱԴՐԱԿՆԻ ՈՒ ԱՊՐԱՍՅԱԿ

ՈՐԲԵՐՏ ՖԱԼԵՏՅԱՆ «Կապան ձեռավորած մեր ձեռնարկությունն այսօր էլ քաղաքի բնականոն զարգացման գրավականն է, ինչը գիտակցում ենք ու հաշվի առնում»

Սկիզբ՝ էջ 3
Աղտոտվածությունն ու ճառագայթման աստիճանը չափելու հնարավորություն չունեն: Հնարավոր է, որ հանքարդյունաբերական ձեռնարկությունների համատեղ ուժերով մի լաբորատորիա հիմնվի բնապահպանական այդ ոլորտները դիտարկելու համար: - Ես մանրամասն տեղյակ չեմ, թե նման լաբորատորիա ստեղծելու հետ կապված ինչ խնդիրներ կան: Դա, իհարկե, այն հարցերից մեկն է, որը հանքարդյունաբերողները կարող են քննարկել: Բայց մենք շատ բարձրորակ լաբորատորիա ունենք այստեղ, ես միգուցե հնարավոր է այն ուղղակի հագեցնել որոշակի սարքավորումներով, որոնք թույլ կտան կատարել այդ գործա-

ռույթները: Իհարկե, «Դիմո գոլդը» պատրաստ է քննարկել առաջարկը հանքարդյունաբերական մյուս ձեռնարկություններ հետ: Բայց ասեմ, որ հանքավայրերի հետ համեմատած, օդն ավելի շատ աղտոտում են ավտոմոբիլային տրանսպորտը, զանազան արդյունաբերական ձեռնարկությունները: Հաշվի առնելով, որ տրանսպորտի արտանետումներն այստեղ առանձնապես մեծ չեն, խոշոր գործարաններ էլ չկան, կարծում եմ՝ օդի աղտոտվածության առումով դիսկերը մեծ չեն... Ես ավելի շատ անհանգստացած եմ, օրինակ, ձեր խնդիրը ջրի որակի համար, ոչ թե օդի: Մենք էլ ենք ստուգում ջրի որակը և շարունակաբար տեղեկացնում մեր աշխատակիցներին՝ երբ կարելի է օգտագործել, երբ ոչ: Ես ավելի շատ

անհանգստացած եմ նաև քաղաքում կոյուղու վատթար վիճակի համար... Այսպիսով՝ այս համայնքում շատ այլ անհանգստանալու խնդիրներ կան, որ ավելի կարելի է, քան օդի աղտոտվածությունն է: - Պարոն Ֆալետյան, Ձեր ղեկավարած ընկերությունը քաղաքատեղծ ձեռնարկություն է, և այսօր էլ Կապանի բնականոն ընթացքն առանց կոմբինատի պատկերացնել հնարավոր չէ: Ձեր պատկերացումներով ի՞նչ դեր ունի այսօր կոմբինատը Կապանի կյանքում, ինչպե՞ս եք պատկերացնում համայնքի կյանքին նրա մասնակցությունը: - Համոզված եմ, որ ընկերությունն այսօր էլ շատ կարելի է

քաղաքի համար և ոչ միայն իբրև աշխատատեղ: Քաղաքում գործող տարբեր ընկերությունների ծառայություններից ենք օգտվում և այստեղից ապրանքներ ձեռք բերում: Մենք այստեղ երկարաժամկետ նպատակներ ենք հետապնդում, համայնքում էլ որոշակի սոցիալական ծրագրեր ենք իրականացնում: Ես շատ քննարկումներ եմ ունեցել հանքային կապերի մեր մասնագետի հետ այն գաղափարի շուրջ, թե ինչպես կարող ենք ավելի լավ իրականացնել այդ ծրագրերը, ես ինչ է պետք անել, որ դրանք ուղղված լինեն համայնքի հնարավորինս շատ բնակիչների ու ոչ թե փոքր, անհատական խմբերի շահեր հետապնդել:

Ներգրավված ենք եղել, մեր կարծիքով, շատ կարելի է նախագծում՝ մասնակցել ենք Կապանի հիվանդանոցի վերանորոգման աշխատանքներին: Դա հենց այն ծրագրերից է, որը տեղավորվում է համայնքի օգնելու մեր պատկերացումների մեջ: Մենք ներդրում ենք ունեցել նաև որոշ մեղ, խոցելի խմբերի ուղղված ծրագրերում, բայց մեր հետագա աշխատանքները կենտրոնանում են լինելու համայնքի բնակիչների հնարավորինս լայն շրջանակներին: Այնպես որ՝ Կապան ձեռավորած մեր ձեռնարկությունն այսօր էլ քաղաքի բնականոն զարգացման գրավականն է, ինչը գիտակցում ենք ու հաշվի առնում: ԱՐՄԻՆ ԱՎԱԳՅԱՆ



2010թ. հունիսի 20-ին ընկերություն էր այցելել Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը

Լուսավորող՝ Ա. Ավագյանի

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐ

Բնապահպանություն. մշտական մոնիթորինգ, ռեսուրսների և թափոնների խելամիտ օգտագործում



Տ. Դյակոնովան՝ իր ղեկավարած բաժնի աշխատակիցների հետ

ՏԱՏՅՈՒՆ ԴՅԱՎՈՒԿԱ

«ԴԳՄԶ» ՓԲԸ շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ

Հաճախ են հարցնում. «Ազդո՞ւմ է ընկերության գործունեությունը շրջակա բնական միջավայրի վրա»: Ասենք, որ իր ծննդյան պահից սկսած մարդը սկսում է ազդել բնության վրա: Մարդը տուն է տարքում, այգի մշակում, մեքենա գնում, դա արդեն ազդեցություն է եւ՝ ոչ փոքր, եթե այդ մարդու մեջ բացակայում է ըմբռնումն ու ներքին կուլտուրան: Ինչո՞ւ են որոշ բակեր կոկիկ, իսկ որոշ ցանկապատներից ներս վախենում են նայել՝ աղբ է եւ թափփվածություն: Նայեք նաեւ գետերի հուններում տարածված կենցաղային աղբին: Մի խոսքով՝ ազդում են բոլորը. հարցն այն է՝ ինչպե՞ս, նորմավորվա՞ծ է այդ ազդեցությունը...

Ինչո՞ւ մեր կողմից մշակվող ամեն նախագծում, ծրագրում շրջակա միջավայրի պահպանության բաժին կա: Հենց նրա համար, որ սահմանվեն նրա վրա ընկերության գործունեության ազդեցության թույլատրելի նորմերը, այն ազդեցությունը, որից բնությունը «զուլխ է հանում» առանց իր եւ շրջապատողների համար վնասի: Եվ եթե կա այդ ազդեցության պոտենցիալը, մշակել է կիրառել միջոցառումներ, որոնք ընկերության գործունեությունը նորմավորված

շրջանակներում կտեղավորեն: Կարողավ ստորեւ բերվող տեղեկատվությունը, որտեղ շեշտադրում է կատարված մեր կողմից իրականացվող միջոցառումների վրա, կարծում ենք՝ ճիշտ եզրահանգումներ կանք. աշխատում է հզոր, քաղաքաստեղծ, խոշոր ծրագրերով եւ լուրջ նպատակներով (այդ թվում եւ բնապահպանական ոլորտում) ձեռնարկություն: Եվ աշխատում է սահմանված բնապահպանական չափորոշիչների շրջանակներում:

«Դիմո գոլդի» բնապահպանական քաղաքականությունը

Ընկերությունն իր բնապահպանական գործունեությունն իրականացնելիս որդեգրել է հետևյալ սկզբունքները՝ ՀՀ եւ միջազգային օրենսդրության պահանջների կիրառում, բացախտություն, թափանցիկություն:

Առհասարակ, «ԴԳՄԶ»-ի գործունեության հիմնական քաղաքականությունն է արդյունաբերական գործունեությունը, շրջակա միջավայրի եւ մարդու (որպես շրջակա բնական միջավայրի մի մաս) անվտանգության ապահովումը: Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ընկերության կողմից իրականացվող քաղաքականության նպատակը ըն-

կերության արտադրական գործունեության եւ շրջակա բնական միջավայրի վրա դրա նվազ ազդեցության միջեւ հավասարակշռություն գտնելն է, բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը:

Ընկերության կողմից ներդրված բոլոր ծրագրերն անցնում են փորձաքննություններ, հանրային լուսնների գործընթաց անցնելով ստանում անհրաժեշտ թույլտվությունները եւ համաձայնությունները: Միայն վերջին մեկուկես տարում հինգ հանրային լուսն է անցկացվել հետևյալ նախագծերի վերաբերյալ՝ «Արծվանիկի պղծամբարի ռեկուլտիվացիան», «Կենտրոնական հանքի կոնսերվացումը», ««Դիվերոյլ» կենսաբանական պատրաստուկի օգտագործումը նավթ պարունակող թափոնների մաքրման համար», «Գեղամուշի պղծամբարի թափոնատարի երկրորդ ժյուղի շինարարությունը»:

«Դիմո գոլդի» բնապահպանական գործունեության վերջին ստուգումների արդյունքում տուգանքներ ու տույժեր չեն սահմանվել: Իսկ մեզ բավականին մանրակրկիտ են ստուգում եւ ստուգում են գրագետ մասնագետները, մարդիկ, որոնք ծնվել են այս քաղաքում եւ այս շրջանի տարածքներն ու կոմբինատի պատմությունը, նրա ներկա վիճակը գիտեն ոչ ըստ լուրերի:



Գեղամուշի պղծամբարը

Շրջակա բնական միջավայրի մոնիթորինգ

2007-2008թթ. անցկացվեց այն տարածքների համակիր ուսումնասիրություն, որոնք ռազմավարական նշանակություն ունեն ընկերության հետագա կայուն զարգացման համար: Այդ տարածքներից մոնիթորինգ են վերցվել, որոնք հիմք են՝ գնահատելու ընկերության հետագա գործունեության եւ զարգացման ազդեցությունը շրջակա բնական միջավայրի վրա: Մոնիթորինգի ծրագիրը ոչ մի պահ չի ընդհատվել, միայն ընդլայնվել եւ լրացվել է: Ձեռք են բերվել նոր ու ժամանակակից սարքավորումներ:

Ընկերությունն ունի մետեոլոգիական կայան, որտեղ չափվում են կլիմայական բնութագրիչները, այդ թվում՝ գոլորշիացումն ու տեղումները: Սյունիքի մարզում մենք միակն ենք, որ պարբերաբար գոլորշիացման չափումներ ենք կատարում. սա կարելու պարամետր է պղծամբարի ջրային բալանսը հաշվարկելու համար:

Իրականացնում ենք ջրային օբյեկտների, մթնոլորտային օդի լայնամասշտաբ մոնիթորինգ: Ամեն ամիս Սյունիքի բնապահպանական տեսչության հետ միասին իրականացնում ենք մոնիթորինգ ընկերության հոսքաջրերից: Գետերում նաեւ հիդրոլոգիական չափումներ են կատարվում: Ընդ որում, դրանց համար օգտագործվում են ժամանակակից գերճշգրիտ սարքավորումներ եւ գործիքներ:

Մեծ ուշադրություն է դարձվում կենցաղային եւ խմելու ջրի որակի վերահսկողությանը: Իրականացվում է օգտագործվող ջրի հաշվարկ, քիմիական եւ մանրէաբանական վերահսկողություն: Քանի որ օբյեկ-

Ջրերի խելամիտ օգտագործում եւ պահպանություն

Ընկերությունը չեզոքացնում է կեղտաջրերի արտանետումը ջրային օբյեկտներ եւ խուսափում նոր արտանետումներից՝ ջուրն ուղղելով դեպի արտադրական գործընթաց: «ԴԳՄ քամիմիկ» միակ ընկերությունն է Սյունիքի մարզում, որն օգտագործում է ջրամատակարարման շրջանառու համակարգ: 2009թ. դադարեցվել են կեղտաջրերի արտանետումները Աճանան գետ: Դրանց մեջ էին մտնում Շահունյանի հանքի Հյուսիսային տեղամասի կենցաղային-տնտեսական եւ արտադրական ջրերը: Հանքի Հարավային եւ Հյուսիսային տեղամասերի հանքային ջրերը հավաքվում եւ ուղղվում են Գեղամուշի պղծամբար, այնուհետեւ ֆաբրիկայի ջրամատակարարման շրջանառու համակարգ:

Ընկերությունը վարձակալում է երկու բաժանմունք ունեցող պարզարան, որը կարող է օգտագործվել կեղտաջրերը մաքրելու համար, եթե արտանետման անհրաժեշտություն է ծագում: Սկսվել է ավտոմատ համակարգի տեղադրում՝ ձեռնարկության ներսում ջրային ռեսուրսների վերահսկողության համար:

Այսպիսով՝ հասնում ենք ջրային ռեսուրսների խելամիտ օգտագործման. նվազում է աղտոտված յուրթերի արտանետման ծավալը, նվազում է ջրային ավազանի վրա ազդեցությունը: Նվազեցվում է մաքուր ջրի քանակը, որը պետք է լրացուցիչ մատակարարվի ընկերությանը:

Նշենք, որ ջրային օբյեկտների վրա ընկերության գործունեության ազդեցություն չի բացահայտվել:

Մթնոլորտային օդի



Մոնիթորինգի շրջանակում կատարվող աշխատանքներ

տիվ եւ սուբյեկտիվ պատճառներով ոչ միշտ են ջրամատակարարները անհրաժեշտ որակի ջուր մատակարարում, ընկերության աշխատակիցներին խմելու շաղկված ջուր է հասցվում:

Գեղամուշի պղծամբարի եւ «ՁՊՄԿ»-ից վարձակալած Արծվանիկի պղծամբարի առանձին տեղամասի ինժեներատեխնիկական եւ էկոլոգիական մոնիթորինգ է ընթանում: Վերահսկվում է պղծամբարների ջրամբարի ամբարտակի դիմաց-կունությունը:

Կատարվում է նաեւ ընկերության հողային թափոնների, թափոնները կուտակելու վայրերի եւ այլ ոլորտների մոնիթորինգ:

Մոնիթորինգի տվյալները նախագծային-տեխնիկական որոշումների հիմք են դառնում, օգտագործվում են շրջակա բնական միջավայրի վրա ազդեցության գնահատման, այդ ազդեցությունը նորմավորելու, կոմբինատի բնապահպանական միջոցառումների ժամանակ...

պահպանություն

Պարբերաբար ջուր է ցանվում կոմբինատի արտադրական իրապարակներում: Խտանյութը տեղափոխվում է ծածկոցներով փակված բեռնատար մեքենաներով: Հարստացման պղծերը կուտակվում են թաց եղանակով, որը կանխում է փոշիացումը (պղծամբարի տարածքում մոնիթորինգի երեք կետ է տեղադրված մթնոլորտային օդում փոշին չափելու համար: Օդի աղտոտվածությունը բացակայում է): Մեքենաներն ու սարքավորումները պարբերաբար տեխնիկական զննություն են անցնում, կոմբինատի մասնագետները կարգավորում են վառելիքային համակարգը մթնոլորտային օդ արտանետումները նվազագույնի հասցնելու համար:

Հողային/անտառային ռեսուրսների պահպանություն եւ ռեկուլտիվացիա

ՊՐԱՏՈՒՄ ԵՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ

Դրվագներ ընկերության արտադրական առօրյայից



Հանքաքարի բեռնաթափման և բարձրան փեղամասը N6 հանքուղու մուտքի մոտ



Շահումանի հանքի N9 հանքուղի



Փաթեթավորվում է վերջնական արտադրանքը՝ խարանյուղը



Հարստացուցիչ ֆաբրիկայում



Հերթափոխի ավարտը

2007-2008թթ. ապագա հանքի տարածքում անց են կացվել երկրաբանահետախուզական աշխատանքներ: Այդ ընթացքում են դրանից հետո տարածքում իրականացվել է սանիտարա-հիգիենիկ մաքրում, խոտ է ցանվել: Դրանով կանխվել է հողի կորուստը անձրեւների և քամու պատճառով: Ամենամյա հետազոտությունը ցույց է տալիս, որ վնասված տարածքներում ձեւավորվել է կայուն խոտածածկույթ, նաեւ ակտիվ բնական աճ կա:

2009-ից ընթանում է Արծվանիկի պոչամբարի՝ «Դիմո գոլդի» օգտագործման տեղամասի ռեկոնստրուկցիան: Աստիճանական խանութներն ու թեք հարթություններն արդեն ծածկվել են 30 սմ հողային շերտով: Նախագծի համաձայն՝ պոչամբարի մակերեսին լցվում է դատարկ ապարների միջանկյալ շերտ՝ ապահով ծածկելով հարստացման պոչերը և կանխելով դրանց փոշիացումը: Պաշտպանիչ շերտի վրա կլցվի հողային շերտ և խոտ կցանվի: Բացի նրանից, որ ռեկոնստրուկցիայի համար դատարկ ապարների օգտագործումը ավելացնում է պատմեչի դիմացկունությունը, դա թույլ է տալիս խուսափել դատարկ ապարների կուտակման համար նոր տարածքների զբաղեցնելուց, ինչն անհրաժեշտ է հողային ռեսուրսները: Ոնեկուտիվացիայի ծրագիրը մշակել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն, այն բարեհաջող բնապահպանական փորձաքննություն է անցել: Գեղանուշի պոչամբարի շահագործման ընթացքում անց է կացվում փուլային ռեկոնստրուկցիա: Ամբարտակի աճանը զուգահեռ արտաքին թեքությունները ծածկվում են հողային՝ բուսածածկույթ ապահովող շերտով: Ակտիվ բնած ընթանում:

Իրականացվում է Կենտրոնական հանքավայրի, որը հանքարդյունաբերական համալիրի սանիտարա-հիգիենիկ ռեկոնստրուկցիան, ըստ ընկերությունում հաստատված ծրագրի, մաքրվում են տարածքները:

Ձեռնարկությունը նաեւ անտառվերականգնման աշխատանքներ է իրականացնում: Հաշվի առնելով Գեղանուշի պոչամբարի կառուցման ժամանակ և 2007-2008թթ. կատարված երկրաբանահետախուզական հետազոտությունների ընթացքում շրջակա բնական միջավայրին վնասված է նախատեսվող վնասները՝ 16 հա անտառ է տնկվել:

Արտադրական և կենցաղային թափոնների հանդեպ վերաբերմունքը

«ԳՊՍԶ»-ում արտադրական և կենցաղային թափոնների հետ տարվող աշխատանքի հստակ միջոցառումներ են մշակվել, հաստատվել է դրանց շարժի հաշվարկը, որն արտացոլվում է ամենամսյա հաշվետվություններում:

Թափոնների մի մասը (մարտկոցներ, մետաղի ջարդոն, թղթի և սովարաթոթի թափոններ և այլն) ըստ պայմանագրի վաճառվում կամ հանձնվում է համապատասխան ընկերություններին: Վաճառքից ստացված միջոցներն օգտագործվում են նոր սարքավորումների գնման և մեր բաժնի աշխատակիցների որակավորման բարձրացման համար:

Ընկերությունը ձեռք է բերել տաքացուցիչ, որն աշխատում է վերամշակված վառելիքաքայուղերով:

Առաջինը Հայաստանում այստեղ անց է կացվում փորձնական ծրագիր՝ օգտագործելով «Դիվերոյ» կենսաբանական պատրաստուկը նախքան պարունակող թափոնների մաքրման համար: Դրա համար կան անհրաժեշտ բոլոր թույլտվություններն ու համաձայնությունները, այդ թվում է՝ բնապահպանական փորձաքննության դրական եզրակացությունը: Մաքրումից առաջ և հետո ստացված արդյունքները գոհացնում են:

Մետաղի ջարդոնն օգտագործվում է հալման արտադրամասում մեխանիզմների համար դետալներ պատրաստելու համար: Դատարկ ապարներն օգտագործվում են Գեղանուշի պոչամբարի ամբարտակների կառուցման և Արծվանիկի պոչամբարի ռեկոնստրուկցիայի համար: Մյուս թափոնների վաճառքը մասնագիտացված կազմակերպություններին թեկուզ և փոքր, բայց եկամուտ է բերում ընկերությանը:

Բնապահպանական գիտելիքների փարածումը, աշխատակիցների որակավորման բարձրացումը

Գրագետ, պահանջվող մակարդակով բնապահպանական խնդիրների լուծումը կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան որակավորում և նշտապես բարձրացնել այն: Բաժնի աշխատակիցներն ամեն տարի որակավորման բարձրացման կուրսեր են անցնում, մասնակցում են հանդիպումների, քննարկումների, սեմինարների: Աշխատանքի նոր ընդունվողներն առաջնային բնապահպանական հրահանգավորում են անցնում: Մշակվել է ուսուցման ծրագիր ընկերության ինժեներատեխնիկական անձնակազմի և ղեկավարների համար: Ընկերության վարչական շենքում բնապահպանական տեղեկատվական վահանակ է պատրաստվել:

Մեր բաժնի աշխատակիցները դասավանդում են դպրոցներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Խնդիրներ

Ցավոք, կան խնդիրներ, որոնք դեռևս չեն կարող լուծել ձեռնարկության ուժերով, քանի որ կան հանրապետությունում բացակայում են դրանց լուծման մեթոդները, կամ էլ թափոնները երեւան հասցնելը տնտեսապես վնասաբեր է: Դրանք են, օրինակ, ժամկետանց ավտոդողերը, ռեագենտները, ռեակտիվները, լյումինացիոն լամպերը: Սյունիքի մարզում չկան դրանք վերամշակող կազմակերպություններ, մայրաքաղաք տեղափոխելը տնտեսապես նպատակահարմար չէ: Չկան թափոնների հավաքման վայրեր, ինչպիսին, օրինակ, կարող էր լինել քաղաքային կենցաղային պինդ թափոնների հավաքատեղի: Ընկերությունը ստիպված է ինքը պահել, ասենք, մաշված ավտոդողերը՝ դրանք պահելու համար բնապահպանական վճարներ տալով: Ստացվում է, որ օրինապահ ձեռնարկությունը ֆինանսապես պատժվում է նրա համար, որ խնդրի լուծման ուղիները հանրապետությունում բացակայում են:

Հայաստանում նաեւ բացակայում է դեմերկուրիզացիոն (սնդիկի մաքրում) համակարգը՝ սնդիկային լամպերի օգտահանման համար: Բացակայում են ընկերությունները, որոնք ի վիճակի կլինեին օգտահանել ժամկետանց ռեագենտները, և դրանց համար թափոնավայրեր չկան: Մենք դիմել ենք մի քանի կազմակերպությունների և ստացել բացասական պատասխան: Հուսով ենք՝ կառավարությունը, տեղական օրգանները կօգնեն լուծել այս հարցերը:

Պարրասպեց ԿՐՄԻՆԵ ԱՎԱԶՅԱՆԸ

ՆԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պատմում են գործընկերները



ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ

Բնապահպանական տեսչության և «Դիմո գոլդ մայնինգ քամինգ» ՓԲ ընկերության միջև կա սերտ համագործակցություն՝ օրենսդրությամբ սահմանված խնդիրներն իրագործելու ուղղությամբ: Ցանկացած համաձայնագրական գործող օրենսդրությունից և նորմատիվներից բխող, որ իջեցվում է տեսչության կողմից, կատարվում է ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ: Այնտեղ ամեն ինչ՝ և արտահոսքերը, և արտամետաղները նորմավորված են: Մեր կողմից դրանք վերահսկվում են, և պետք է ասել՝ տեղական ժամանակ այնտեղ չափաբանակների գերազանցում չի գրանցվել: Իր աշխատակիցների միջոցով օդային և ջրային ավազանի պարբերական մոնիթորինգ է անցկացնում նաեւ կոմբինատը, որը հագեցած է դրանց աղտոտվածությունը ստուգող ժամանակակից չափիչ սարքավորումներով:

Շատ կարեւոր մի հանգամանք՝ Գեղանուշի պոչամբարում ներդրվել է փակ ցիկլ, թափոնաջրերը մաքրվում են և նորից մղվում ֆաբրիկա, ինչի արդյունքում առայսօր բացառվել է ջրային ավազանի, մասնավորապես Ողջի գետի աղտոտումը:

Ընդհանուր առմամբ բազմաթիվ գործեր է կատարել ընկերությունը շրջակա միջավայրն ըստ պատշաճի պահպանելու ուղղությամբ: Դրանցից եւս մեկն ուզում են անպայման հիշատակել: Այս տարվա գարնանը Դարձանաձորի, Ուխտավայրի և Առաջաձորի տարածքներում՝ մոտ 16 հա-ի վրա, ընկերությունը կատարել է ծառատունկ (50 հազար տնկի): Այդ նպատակով ծախսվել է մոտ 48 մլն դրամ: Առաջիկա հինգ տարում ընկերությունն իրականացնելու է այդ տնկիների խնամքը, որից հետո կհանձնվի անտառային տնտեսությանը:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏԱՌՈՑ ԱՎԵՆՐԿ

Հայ, ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, ամերիկացի, ռուս եւ այլ երկրների առաջատար մասնագետները, որոնք հնագիտական-երկրաբանական ուսումնասիրություններ են կատարել, հանգել են նույն կարծիքին, որ Կապանի հանքերից պղինձ ձուլվել է շատ վաղ անցյալում: Կատարված մասնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս նաեւ, որ Կապանի ապարները շատ ամուր են, եւ նախնադարյան եղանակներով կատարվող պղնձի արդյունահանումը մեծ դժվարությունների հետ էր կապված, այդ պատճառով կատարվում էր մեծ ընդմիջումներով եւ փոքր քանակով:

Չանգեզուրում, բացի պղնձից, կան մոլիբդենի, երկաթի, ոսկու, արծաթի, արճճի, կապարի, վոլֆրամի եւ այլ բնական օգտակար հանածոների պաշարներ, սակայն շահագործման դժվարությունների պատճառով բնակավայրի հիմնական շահագործումն իրականացվեց 19-րդ դարի կեսերից:

Երկրամասի հանքավայրերի մասին վկայություններ կան միջնադարի արաբական եւ պարսկական աղբյուրներում, հայ մատենագիրների աշխատություններում: Կապանի պղնձահանքերի եւ մասնավոր գործատերերի մասին հիշատակում է 14-րդ դարի արաբ հեղինակ Ղազվիհին: Հանքերի ու դրանց շահագործման մասին հիշատակում է նաեւ Այունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Հնագույն ժամանակներից բազմաթիվ հանքերի հետքեր են պահպանվել Այունիքում՝ նաեւ ներկայիս օգտագործվող հանքերի տարածքում: Հին հունական արխիվներում տեղեկություններ կան, որ Ղաթարի, Կավարտի, Բաշքանդի, Գյունիշի մետաղից պատրաստել են սրեր, դաշույններ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, տեգեր, վահաններ, սաղավարտներ:

Շրջանը Հայաստանում խոշոր հանքային կենտրոն է եղել:

Այունիքի հանքերի հնության մասին վկայում են նաեւ հանքավայրերում հանդիպած փորվածքները, հայտնաբերված հանքահորային սանդուղքները, քարացած փայտյա գործիքների մնացորդները:

Կապանի հանքերի մասին լեռնային ինժեներ Էռնի 1910թ. ուսումնասիրությունների համաձայն՝ Կապանի հանքավայրը կարող էր մեծ քանակությամբ պղնձի արտադրություն կազմակերպել միայն երկաթի յուրացումից հետո՝ մ.թ.ա. 5-7 դարերում: Մինչ այդ պղնձի արտադրությունը կատարվել է երկրի մակերեսին մոտ հարուստ շերտերից՝ քիչ քանակությամբ:

Նախնադարյան ժամանակներում պղինձը ձուլվել է «Բարաբաթունի» կավահողից պատրաստած վառարաններում՝ փայտի վառելանյութով:

Այստեղ պղնձագործության հեռավոր անցյալի մասին են վկայում շրջանի տարբեր բնակավայրերում հայտնաբերված պղնձե ու բրոնզե իրերը: Հայտնաբերված կաղապարները վկայում են մ.թ.ա. այստեղ եղած ձուլման գործի մասին:

Հին հուշագրերում պահպանվել է, որ Բարաբաթուն գյուղի մոտ 1279-1290-ականներին գործել է բազմամետաղային հանք, որի հանքաքարի մեջ բարձր տոկոս էին կազմում ոսկին եւ արծաթը: Հանքը դարեր շարունակ կոչվում էր «Գյունիշ»: Դա այժմվա Շահունյանի հանքն է:

Պատմագրական հուշագրերում



Կապանի պղնձահանքային ձեռնարկության հարստացուցիչ ֆաբրիկայի հին շենքը (1935-1968թթ.)

Կապանի հանքարդյունաբերության պայմանություն



20-րդ դարասկիզբ, հանքաքարի դուրս բերումը հին ձեռով (Կապանի հանքեր): Լուսանկարը՝ Ստեփան Լիսիցյանի «Ջանգելուրի հայերը» մենագրությունից

նշված է, որ Այունիքի թագավորությունում 11-12-րդ դարերում կար դրամի առատություն, որը ստացվում էր ձուլված ոսկուց եւ արծաթից:

Կապանի հանքերում պղնձի արդյունահանումը նոր թափ է ստանում հայկական ազատագրական շարժման նոր ժամակաշրջանում: 1724թ. Ղարաբաղի մելիքների ներկայացուցիչ Իվան Կարապետը ռուս թագավորին գրում է, որ Այունիքում կան հանքավայրեր, որտեղ հանքաքարի մեջ բարձր պարունակություն են կազմում պղինձը, արծաթը, ոսկին, արճիճը, ցինկը, որոնք բոլորն առկա են միեւնույն հանքում:

Ռուսական կայսրությունը մասնագիտական հանձնաժողովներ է գործուղում Կապան: Լայն թափ ստանալով՝ պղնձի արտադրությունը Կապանում դարձավ ռուս եւ եվրոպացի կապիտալիստների ուշադրության կենտրոնը:

19-րդ դարի 40-ական թվականներին Կապան եկավ գերմանացի նշանավոր երկրաբան Հերման Աբիլը: Առաջին անգամ նա մասնագիտորեն, գիտական հիմքով մանրամասնորեն ուսումնասիրեց Կապանի հանքերի հին փորվածքները: Նա գրել է, որ Յակով Ռոզովի հետ միասին Կապանում ուսումնասիրությունների ժամանակ Կավարտ գյուղից ոչ հեռու գտնվող Սայադաղ լեռան ստորոտում հայտնաբերել են 120-ից ավելի հին փորվածքներ (հանքեր): Նա Ռոզովի հետ պայմանավորվում է, որ Կապանում պետք է կառուցել պղնձաձուլարան՝ հանքաքարի հանույթը կազմակերպելու համար:

1841թ. Կապան եկավ ԱՄՆ պղնձի տրեստի ներկայացուցիչ ինժեներ Ֆեբեյը: Նա եռանդուն աշխատանք կատարեց այստեղ



Հերման Աբիլ, գերմանացի նշանավոր երկրաբան, Կապանի հանքերի առաջին ուսումնասիրողը

կոնցեռն կազմակերպելու ուղղությամբ, սակայն Այունիքի մելիքները ցանկանում էին հանքերը տրամադրել ռուս չինովնիկներին:

1843թ. Ռոզովի հետ կրկին գալիս է Աբիլը: Նա 1843-1845 թվականներին Կապանից բացի երկրաբանական ուսումնասիրություններ է կատարել նաեւ Մեղրիում եւ Քաջարանում: Նրան անվանել են «Կովկասի երկրաբանության հայր»: Երկրաբանը նկարագրել է Կապանի, Մեղրու, Քաջարանի հանքավայրերը՝ ենթադրելով նաեւ Քաջարանում մոլիբդենի հանքանյութի առկայության մասին: Դա երկրամասի տարածքում մոլիբդենի գոյության մասին առաջին հիմնավորումն էր:

Երկրամասի հանքարդյունաբերության եւ կոմբինատների հիմնադրման պատմության մեջ շատ է կարեւորվում Յակով Ռոզովի (ռուս արդյունաբերող, Շուշվա բնակիչ) անունը: Բայց նա չի եղել Կապանի հանքերի ոչ հայտնա-

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

գործողը, ոչ պիտեղը. մինչև երբ հանքերը գործել են, սակայն չունենալով հանքավայրերի մշակման համար միջոցներ եւ ունենալով ռուսական կողմնորոշում՝ տեղացիները Ռոզովին են գիջել իրենց իրավունքները: Նա 1846 թվականին թույլտվություն է ստանում կառուցել գործարան եւ շահագործել Կապանի հանքավայրը: Սակայն 1850-ին հանկարծամահ է լինում, եւ գործը՝ կիսատ:

Ռոզովի սկսած գործը շարունակեցին հույները՝ ուստա Ալավերդի Խարլամպի Կոնդուրովի գլխավորությամբ, որոնք 1850թ. Կավարտում, Բաշքանդուս եւ Ղաթարում հանքեր բացեցին եւ կառուցեցին ծովարան-գործարան:

1853 թվականին Խ.Կոնդուրովը կառուցեց Կավարտի պղնձա-ծովարանը, այն գործեց 10 տարի՝ աստիճանաբար մեծացնելով հզորությունը: Կոնդուրովներն ընթացքում բացում են ավելի հարուստ հանքեր, մի ծովարանը չի բավականացնում եւ կառուցում են Հալի-ծորի ծովարանը:


Նրանցից հետո Ազուլիսից եկած Խոջամիրյան եղբայրներն են Ղաթարում հանքեր վարձակալում, բացում եւ կառուցում Ղաթարի ծովարանը: Սկսվում է մրցակցությունը, Կոնդուրովները կառուցում են 4-րդ գործարանը:

Մրցակցությունը խթանեց Կապանում պղնձի արդյունահանումը, այն դարձավ ցարական Ռուսաստանի պղնձի արտադրության մշակող կենտրոն: Պղնձն ախտեղից արտահանում էին Ռուսաստան, Իրան, Վրաստան, Նախիջեան, Թուրքիա, այնտեղից՝ եվրոպական երկրներ: 1860-ականներին Կոնդուրովը ձեռնամուխ է լինում նաեւ Բարաբաթումի հանքերի շահագործմանը, կառուցում Բարաբաթումի գործարանը:

Յետագա տարիներին նոր ձեռնարկատերեր են երեւան եկել՝ Լազարեւ եղբայրներ, Մուրադով, Մելիք-Փարսադանյաններ, Մելիք-Ղարաբաղյան, Աբաջանյան, «Կովկասյան ընկերություն» եւ այլն: Բացվեցին նոր հանքեր, գործարկվեցին նոր գործարաններ: Խոջամիրյանները եւ Կոնդուրովները կառուցում են նոր՝ ավելի հզոր եւ նոր եղանակներով ծովան գործարաններ՝ մեքենայացված աշխատանքով: Դա զարկ տվեց նաեւ հիդրոէներգետիկայի զարգացմանը, ծովարանների կողքին նրանք հիդրոկայաններ կառուցեցին: Էլեկտրական էներգիայի օգտագործումը նոր թափով զարգացրեց պղնձարտադրությունը: Հանքատերերը սկսեցին կառուցել բնակելի շենքեր, հիվանդանոց եւ այլն, ըստ էության, սկսվեց կառուցվել նաեւ Կապան քաղաքը:

1897թ. Մելիք-Ազարյանը Ողջի գետի ծախս ափին՝ Բայրաղում, կառուցեց նոր կատարելագործված գործարան, որը կոչվում էր «Սյունիքի գործարան»: Այստեղ հոսքագծեր էին աշխատում, կիրառվում էին պղնձի ծովան նոր եղանակներ, եւ ստացված արտադրանքի ինքնարժեքը շատ ցածր էր: Շատ այլ հանքատերեր էլ սկսեցին իրենց պղնձը հալել այստեղ. Մելիք-Ազարյանը կառուցեց նաեւ հիդրոէլեկտրակայան, որն ավելի զարկ տվեց արդյունաբերությանը: Մանր հանքատերերը չդիմացան մրցակցությանը եւ իրենց արտադրանքը տալիս էին նրան: Չուլարանը առաջինն էր Կապանում, որտեղ ծովունը կատարվում էր շախտային եղանակով: 1900-ականներին գործարանն ամենախոշորն էր Հայաստանում, արտադրում էր Հայաստանում ծով-

«Դինո գոլդ մայնիգ քամինի» ՓԲ ընկերության կառուցվածքային ստորաբաժանումները



ված պղնձի 50 տոկոսը (Կոնդուրովի հետ միասին՝ 60 տոկոսը): 20-րդ դարի սկզբում Կապանում գործում էին մոտ 16 մանր ու խոշոր արհեստանոց-գործարաններ:

1907թ. «Բիրժելի վեդոմոստի» պարբերականը Կապանում աշխատող բանվորների թվի մասին նշում է՝ 5000: Դատական, վարչական, մասնագիտական հարցեր լուծելու համար ստեղծվում է «Դավանի հանքարդյունաբերողների ընկերությունը»: Ընկերության մշակած նախագծով Մելիք-Ազարյանները 1908-ին Կապանում կառուցում են առաջին հարստացուցիչ ֆաբրիկան: Ֆաբրիկայի խտանյութն ուղարկվում էր Սյունիքի ծովարան: Աստիճանաբար աճում է հանքաքարի պահանջարկը, շահագործվում են նոր հանքեր:

«Ֆրանսիական կովկասյան արդյունաբերական եւ մետաղագործական ընկերությունը» 1910թ. գնում է Մելիք-Ազարյանի գործարանը եւ որոշ հանքեր: Յետագայում ֆրանսիացիները գնում են նաեւ մանր հանքատերերի հանքերը: Նրանց զուգահեռ աշխատում էին միայն Կոնդուրովներն ու Խոջամիրյանները:

Առաջին համաշխարհային մախտեին Խոջամիրյանները նույնպես իրենց հանքաքարը հանձնում էին ֆրանսիացիներին, միայն Կոնդուրովներն էին պահում պղնձածուլարան: Ֆրանսիացիները Կապան են ներմուծում հզորագույն տեխնիկա, մեխանիզմներ ու սարքավորումներ: Վերագինում են տեղի ողջ հանքարդյունաբերությունը: Ֆրանսիացիները նաեւ մեծ ուշադրություն էին դարձնում երկրաբա-

նական-հետախուզական աշխատանքներին: Կապանը աշխատուժ էր ձգում տարբեր տեղերից. հայերից բացի այստեղ աշխատում էին պարսիկներ, հույներ, վրացիներ, ադրբեջանցիներ, թաթարներ, մինչեւ անգամ՝ եվրոպայից եկած բանվորներ: Պղնձի թողարկումն անցեց 15 անգամ, կառուցվեց նոր՝ ավելի հզոր պղնձածուլարան՝ օժանդակ արտադրամասերով եւ հիդրոկայան:

Եթե 1890թ. Կապանի հանքերի բոլոր ծովարանները միասին արտադրում էին 25.900 փուֆ պղնձ, ապա 1917՝ միայն ֆրանսիացիների կառուցած նոր ծովարանը դրա կրկնապատկեց:

Տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման շնորհիվ հանքաքարից պղնձի կորզման ցուցանիշը 1913թ. 71 տոկոսի փոխարեն 1917-ին հասավ 90 տոկոսի: Կառուցվեց նոր հզոր դիզելային էլեկտրակայան, արտադրությունը գիտական հիմքի վրա դնելու համար՝ քիմիական լաբորատորիա:

1918թ. տարածաշրջանում սկսված կռիվները եւ արտադրության միջոցների ազգայնացումը խունապի մատնեց սեփականատերերին, հեռացան ֆրանսիացիները, դրսից եկած այլ մանր հանքատերեր: Երկրամասում պատերազմական գործողությունները շարունակվեցին մինչեւ 1921թ.: Այդ ընթացքում ավերվեցին գործարանները, էլեկտրակայանները, արտադրական օբյեկտները, թալանվեց ամեն ինչ, հանքերը լցվեցին ջրով: Կապանից հեռացան այլ ազգության աշխատողները: Փաստորեն, 1918-ից Ջանգեզուրում տնտեսու-

թյունը քայքայվեց: 1921թ. նախկին հանքարդյունաբերողների ընկերության նախագահ Սմբատ Մելիք-Ստեփանյանը, որն Ալեքսանդր Սյանինկյանի կողմից նշանակված էր Ղափանի արտակարգ կոմիսար եւ լեռնային գործի տեսուչ, Աքաճաղ Մռավյանի հանձնարարությամբ կազմում է հանքերի վերականգնման եւ զարգացման առաջին պլանը:

1924թ. Թբիլիսիից հանձնաժողով ժամանեց Կապան՝ ուսումնասիրությունների: Պղնձի պահանջարկը երկրում այնքան մեծ էր, որ դեռ հանքերը չվերականգնած, օգտագործելով 1917թ. հանքերի դեներին պահպանված հանքաքարի կույտերը, գործարանի բալուն մնացած շլամը եւ խարամները՝ գործարկեցին ծովարանը: Այդ շրջանում Խորհրդային Միությունում ոչ մի տոննա պղնձ չէր արտադրվում: Նոր կոմբինատը կոչեցին «Կարմիր Նոյեմբեր»:

Սկսվեցին հանքերի վերականգնման աշխատանքները, վերանորոգվեցին ծովարանը, հէկերը, գյուղերից հավաքվեցին ցիրուցան եղած նախկին աշխատողները: 1925թ. «Կարմիր Նոյեմբեր» գործարանը երկրին տվեց առաջին պղնձը: Մինչ 1927թ. այն աշխատում էր իր կես հզորությամբ:

1930-ականներին ավարտվեց ֆրանսիացիների ժամանակ աշխատող հանքերի, ծովարանների, էլեկտրակայանների եւ արտադրամասերի վերականգնումը: Կրկնապատկվեց պղնձի ծովունը:

1930-ից Կապանում սկսվեց նոր հարստացուցիչ ֆաբրիկայի կառուցումը: Այն (նաեւ ստորգետնյա տրանսպորտային հանքուղին) շահագործման հանձնվեց 1935թ.:

1937թ. կառուցվեց Ալավերդու գործարանը, եւ փակվեց Կապանի ծովարանը. հանքաքարը հարստացուցիչ ֆաբրիկայում հարստացնելուց հետո խտանյութն ուղարկվում էր Ալավերդի:

Իսկ 1968 թվականին Կապանում սկսեցին գործել նոր՝ ներկայիս հարստացուցիչ ֆաբրիկան, նորակառույց ստորգետնյա տրանսպորտային հանքուղին եւ մյուս ենթակառուցվածքները:

1977թ. ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրությունը որոշեց միավորել Ղափանի պղնձահանքային կոմբինատը եւ բարձր շահութաբերությամբ աշխատող Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը: Միացյալ ձեռնարկությունը կոչվեց «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»: Միավորումից հետո փաստորեն Ղափանը դարձավ Քաջարանի կոմբինատի ենթակայության արտադրական միավորում:

1988թ. միավորված կոմբինատները բաժանվեցին, Քաջարանի կոմբինատը կրեց նույն անունը՝ «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», իսկ Կապանինը՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ»:

2002թ. Կապանի լեռնահարստացման կոմբինատը մասնավորեցվեց՝ վաճառվելով շվեյցարական «Դենո» ընկերությանը: 2005-ին կոմբինատի սեփականատերը դարձավ «Վաթրին Ինվեստմենթ» անգլիական ընկերությունը: 2006-ից «Դինո գոլդ մայնիգ քամինի» գլխավոր սեփականատերն է կանադական «Dandee Precious Metals» ընկերությունը:

Պատրաստեց Ա.ԱՎԱԳՅԱՆԸ



Կապան

Համառոտ փեղեկանք «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերության սեփականափրոջ մասին

ԴՓՄ-ը («Դանդի փրիշ մեթալ») Կանադայում տեղակայված միջազգային հանքարդյունաբերական ընկերություն է, որն զբաղվում է քանկարժեք մետաղների հանքավայրերի եւ օբյեկտների ձեռքբերմամբ, հետախուզմամբ, զարգացմամբ, հանքարդյունահանմամբ եւ մշակմամբ: ԴՓՄ-ի սովորական արժեթղթերի եւ արժեթղթերի գնման հավաստագրերի (DPM; DPM.WT; DPM.WT.A – նշանների ներքո) առքուվաճառքն իրականացվում է Տորոնտոյի բորսայում (TSX): Ընկերության գործունեության նպատակն է հաստատել, ձեռք բերել, ֆինանսավորել, զարգացնել եւ մշակել ցածր ծախսատարությամբ, երկարակյաց հանքարդյունաբերական օբյեկտներ:

Ընկերությանն են պատկանում «Չելոպե Մայնինգ»-ի («Չելոպե») բաժնետոմսերի 100%-ը: Այն տեղակայված է Սոֆիայից 70 կմ դեպի արեւելք եւ արտադրում է ոսկու, պղնձի եւ արծաթի խտանյութ: Ընկերության սեփականությունն են հանդիսանում նաեւ «Նամիբիա Քասթոն Սմելթերս» ՍՊԸ-ի («NSC») արժեթղթերի 100%-ը, «Վաթին Ինվեսթմենթ Լիմիտիդ»-ի 95%-ը, որը «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ի սեփականատերն է: «Դինո գոլդ» տեղակայված է Կապան քաղաքում, 320 կմ դեպի հարավ-արեւելք երկրի մայրաքաղաք Երեւանից եւ արտադրում է ցինկի եւ ոսկու պարունակությամբ պղնձի խտանյութ: ԴՓՄ-ին են պատկանում նաեւ մշակման նախապատրաստման փուլում գտնվող Կրունովգրադի (Բուլղարիա) ոսկու հանքի նախագիծը եւ մի շարք հետախուզական նախագծեր (օբյեկտներ) Սերբիայի խոշոր ոսկու-պղնձի-արծաթի հանքավայրերից մեկում:

2003թ. սեպտեմբեր ամսին ծավալում աշխատանքների արդյունքում ԴՓՄ-ը գնում է երկու հանքարդյունաբերական օբյեկտ Բուլղարիայում՝ «Չելոպեչի» ոսկու հանքը եւ Կրունովգրադի ոսկու հանքարդյունաբերական օբյեկտը, որը ներկայումս գտնվում է մշակման նախապատրաստման փուլում:

Իր բաժնետերերի համաձայնությամբ՝ 2004թ. ապրիլին ԴՓՄ-ն ավարտին է հասցնում իր փոխարկումը ոսկու արդյունահանման ընկերության՝ որպես առաջնային հարթակ ունենալով բուլղարական հանքարդյունահանման օբյեկտները:

Կորպորատիվ նպատակներ եւ ռազմավարությունը
Կորպորացիան հաճախ է առել ստեղծել իր բաժնետոմսերի արժեքն իր իսկ կարգավորված, սակայն ճկուն գործարարային մոդելի միջոցով: ԴՓՄ-ը նախաձեռնել է զարգացման տարբեր փուլերում գտնվող հանքարդյունահանման նախագծերի մի խոշոր միավորը, ինչպիսին «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունն է, տեղական որեւէ կլանի սպասավորող չէ, տեղական որեւէ կլանի ձեռքին քաղաքական մասիակ չէ՝ ինչ-ինչ հակառակորդների ջախջախելու համար: Տնտեսական այդ միավորի ղեկավարներին հաճելիորեն չենք տեսնում այուհիջյան բազմաժամր ու բազմաբովանդակ խաղերում ու խարդավազներում:

Գործընկեր փնտրելիս եւ ընտրելիս այնտեղ չեն հարցնում՝ որտեղացի՞ ես, ո՞ւմ բարեկամն ու խնամին ես, ինչպե՞ս ես քեզ պահել վերջին ընտրություններում:

Շատ սովորական այս դիտարկումներն առաջին հայացքից քիչ առնչություն ունեն տնտեսական գործընթացների հետ: Մինչդեռ



Ընկերության վարչական շենքը

քարդյունահանման նախագծերի մի շարան: Ներկայումս Կորպորացիան ունի նախագծեր/օբյեկտներ, որոնք գտնվում են մշակման եւ վերագործացման, իրագործման եւ զարգացման, նախահետախուզական եւ հետախուզական տարբեր փուլերում:

ԴՓՄ-ը մտադրություն ունի առավելագույնիս հասցնել իր գոյություն ունեցող օբյեկտների/նախագծերի ներուժը եւ իրացնել դրանց արժեքը հետախուզության, մշակման եւ շահագործման միջոցով:

ԽՆՏԵՍՈՒՄ

Տնտեսություն՝ անցման շրջանին բնորոշ բարդություններից ձերբազատվող

Սկիզբը՝ էջ 1
Նախ՝ ձեռնարկությունում թափանցիկությունը, հրապարակայնությունն ու բացախությունը միանգամայն նոր բարձրության վրա են: Եթե կա հարց, անգամ տիպի ու անցանկալի, այնտեղ պատասխանում են ու չեն շրջանցում: Այնտեղ չեն թաքցնում ձեռնարկության սեփականատիրոջ անունը: Պրոբլեմների, քննադատության առկայության դեպքում էլ խուլ կան կոյր չեն ձեւանում:

Բավականին լուրջ բիմ է վարում ձեռնարկության գործերը՝ պրոֆեսիոնալիզմով, ժամանակակից մտածելակերպով, նոր աշխարհայացքով, բնագավառին ներկայացվող միջազգային քաֆանիզների իմացությամբ: Ցանկության դեպքում անգամ տեղի ղեկավարներն ու նրանց մերձավորները չեն կարող քարե դարին բնորոշ կուռքերի վերածվել ձեռնարկության աշխատակիցների ու գործընկերների համար. դրա պահանջարկն առհասարակ չկա այդ տնտեսությունում:
Մարդկանց գնահատելու չափանիշն էլ այնտեղ ղեկավարի անձին նվիրվածությունը չէ, այլ աշխատանքը, պատասխանատվությունն ու արհեստավարժությունը:
Բնագաղափարական ոլորտում արեւելյան ոճի բազմաթիվ խաղեր տեսած ու տեսնող Սյունիքում այսօր բնագաղափարական հար-

ցերով զբաղվող գրագետ բիմ ենք տեսնում այնտեղ:
Տնտեսական այդ խոշոր միավորը, ինչպիսին «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունն է, տեղական որեւէ կլանի սպասավորող չէ, տեղական որեւէ կլանի ձեռքին քաղաքական մասիակ չէ՝ ինչ-ինչ հակառակորդների ջախջախելու համար: Տնտեսական այդ միավորի ղեկավարներին հաճելիորեն չենք տեսնում այուհիջյան բազմաժամր ու բազմաբովանդակ խաղերում ու խարդավազներում:
Գործընկեր փնտրելիս եւ ընտրելիս այնտեղ չեն հարցնում՝ որտեղացի՞ ես, ո՞ւմ բարեկամն ու խնամին ես, ինչպե՞ս ես քեզ պահել վերջին ընտրություններում:
Շատ սովորական այս դիտարկումներն առաջին հայացքից քիչ առնչություն ունեն տնտեսական գործընթացների հետ: Մինչդեռ

դրանք առանցքային նշանակություն ունեն բիզնեսի առողջության ու զարգացման, հասարակական հարաբերությունների ներդաշնակության համար: Հենց այդ իրողություններն են՝ աշխատանքին բնորոշ, որ հիմք են տալիս ենթադրելու՝ Կապանի կոմբինատի առջեւ ծառացած խնդիրները լուծելի են, կոմբինատի սեփականատերն ու ղեկավարությունը կապանցիների հետ հարաբերություններում անկեղծ են, կոմբինատի զարգացման ծրագրերն իրատեսական են:
Տա՛ Աստված, որ այդ ձեռքբերումներն անշրջելի լինեն ու ոչ խաբուսիկ, այլ պատասխանատու երկրամասում կունենանք երեւութականության մի մոլորակ եւս, ինչով այնքա՛ն հարուստ է Սյունիք աշխարհն ու հատկապես հանքարդյունաբերությունը:

ՍԱՍՎԵԼ ԱՆԵՑԱՆՅԱՆ

Այունյաց երկիր
S U N I A C Y E R K I R
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱՆԵՑԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախուսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր կիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:
Ռ՝ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2100, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 26.07.2010թ.: